

Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Թ. — ՇՐՋԱՆ ԺԸ. **1885** ՏԱՐԻ ԺԷ. ՍԵՊՏԵՄԲԵՐ 30

ԵՍԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՆԳԵԱՒ Ի ՏԷՐ

Սեպ. 12 ԷՋՄԻԱԾԻՆ

Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոս Տեղապահ Ս. Սինոդի.

Ցաւով յայտնում ենք Երուսաղէմի Պատրիարք Եսայի Սրբազանի վախճանը։ Կ. Պօլսոյ Պատրիարք Յարութիւն

—

13 Սեպ. Կ. Պօլիս, Տ. Յարութիւն Պատրիարք Հայոց

Խորին ցաւով իմացանք Եսայի պատրիարքի մահը. Հոգեհանգիստ պիտի կատարուի ի փրկութիւն հոգւոյ Նորին։ Տացէ Աստուած Նորան մի արժանաւոր յաջորդ։

Տեղապահ Մկրտիչ Արքեպիսկոպոս

—

13 Սեպ. *Երուսաղէմ, Երեմիա Եպիսկոպոս.*

Խորին ցաւով իմացանք Եսայի Պատրիարքի մահը. Հոգեհանգիստ պիտի կատարուի ի փրկութիւն հոգւոյ Նորին։ Տացէ Աստուած արժանաւոր յաջորդ Երուսաղէմայ Աթոռոյն ի մխիթարութիւն Միաբանութեանդ։

Տեղապահ Մկրտիչ Արքեպիսկոպոս

ԿՐՕՆԱԿԱՆ

ԿԱՄԱԿԱՑԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐԻ ՎՏԱՆԳԸ.

Աստուած ամեն բան տեսնում է, ամեն բան քննում է, ամեն բան կշռում է՝ թէ մեր մտքերը, թէ մեր ցանկութիւնները, թէ մեր մտքի որոշումն և թէ մեր գործը. առաքինութիւնն որպէս և յանցանքը բուսնում աճում են մի ցանքի նման, որ մարդուս սրտումն է ցանած։ Ծածուկ բանն յայտնվում է. ուրեմն սիրտդ մաքուր և ուղիղ պահիր։

Ամեն մի մարդ, կարելի է ասել, քիչ կամ շատ՝ երկու տեսակ դեր է կատարում իւր կեանքումը։ Բոլորովին ուրիշ մարդ է նա հասարակական կեանքի մէջ իւր ունեցած վարմունքովը բարեկամների, ծանօթների, օտարների, իւր մեծերի և իւր ձեռքի տակ եղած մարդոց հետ։ Նա, որչափ որ կարող է, միշտ իրան այնպէս է պահում և այնպէս է ցոյց տալի, որ շատ պատուելի լինի և միշտ ցանկանում է, որ իրան հաւանեն։ Նա իւր պարտականութիւնները կատարելու մէջն էլ, եթէ ինքն այնպէս էլ չլինի, գոնէ այնպէս է ցոյց տալիս իրան՝ որ լաւ մարդ է, արդար և ուղիղ մարդ, սիրով վարուող և ճիշտ ու խիստ։ Ինչպէս որ նա, տանից դուրս գալու ժամանակն, աւելի խնամով ու կոկ է հագնվում, որ վրան մի պակասութիւն չտեսնուի, այնպէս էլ իւր վարմունքի մէջ զգոյշ է ու քաղաքավարի։ Իւր խօսակցութեան մէջ լաւ մտածելով բերնից խօսք հանող, կշռող իւր ասելու բանն. իւր գործ կատարելու մէջ կառավարուող, սիրտ շահող այնպիսի բան չի անիլ, որ ուրիշին վատ թուի։

Դուրսն այսպէս երևեցող մարդը բոլորովին ուրիշ կարող է լինել ներսն, իւր տան մէջ, ուր որ դուրսը հագած լաւ հագուստը վրայից հանում է ու տան հագուստը հագնում, որոյ մէջն աւելի ազատ է։ Այստեղ նա շատ անգամ, ինչպէս իւր հագուստի վերայ այնքան ուշադրութիւն չէ դարձնում, այնպէս էլ իւր խօսքի ու գործի մէջ այնքան զգուշութիւն չէ բանեցնում, իւր մտքի

միջինն ասումէ առանց պահելու, առանց քաշուելու. իւր տանեցւոց հետ այնպէս չէ, ինչպէս որ է օտարների հետ ու ցաւելով պէտք է ասենք, որ՝ հէնց ամեն կողմից էլ՝ շատ անգամ ամենևին այն մարդը չէ, ինչ որ դրսումն են նորան ճանաչում, այլ բոլորովին հակառակն։ Նա ազատ ընթացք է տալիս իւր սրտի լաւ կամ վատ տրամադրութեանն. իւր ասած խօսքերն ամենայն զգուշութեամբ ու խնամով չէ կշռում, իւր ազատ դատողութիւններն է տալի այն մարդոց վերայ, որոց հետ դրսւը գործ է ունեցել, մի խօսքով նա իրան ցոյց է տալիս այնպէս, ինչպէս որ իսկապէս է, և ոչ թէ այնպէս, ինչպէս որ ուրիշներին երևիլ կըցանկար։

Բայց, ինչպէս որ մարդիկ իրանց տանն ու ընտանեկան շրջանի մէջն են երևում, մինչև անգամ նորանից էլ բոլորովին տարբեր են իրանց սրտի խորքումն։ Ա՜խ, ո՞վ իւր մէջն իրան այնքան մաքուր է ճանաչում, որ կարողանար իւր սիրտը բաց անել ու ինչ որ մտքիցն ու սրտիցն անց է կենում, իւր ամենամտերիմ բարեկամներին, իւր ամենամօտ ընկերներին ասել։ Ո՞վ է այնքան անմեղն, որ կարողանար՝ առանց կարմրելու՝ ամեն մի մարդու թողնել մտիկ տալ ու տեսնել այն ամեն բանն, ինչ որ իւր սրտումը կայ՝ ու ծածկում, թագցնումէ՞։ Ուրեմն մեզ լաւ բարեկամ ու ու սիրելի մարդոց առաջն էլ հարկաւորութիւն՝ ունինք մեզ լաւ ցոյց տուող դիմակի, որոյ տակը ծածկուենք նորանցից որ մեզ չկարողանան ճանաչել թէ՝ մեք ինչ ենք և ինչպէս ենք երևում իրանց. ուրեմն կան դեռ այնպիսի գաղտնիքներ, որ աշխարհիս ոչ մի բանի գնով չենք կարող ուրիշին ասել իբրև մեր սրտի խոստովանութիւն որպէս զի աւելի վատ չերեւինք, քան թէ իսկապէս ենք։

Մարդ տանից դուրս ինչպիսի կեանք որ վարումէ, այն իւր կեանքին համեմատ էլ նորան դատումեն. ուրեմն աշխարհումն մարդուս դատումեն այնպէս, ինչպէս որ երևումէ. ուրիշ խօսքով ասենք, մարդուս երևումն են դատում, ոչ թէ իրան, ինչպէս որ իսկապէս կայ և է. Նոքա, մէկին դատած ժամանակին, չեն կարող իմանալ, թէ նորա ինչ դիտաւորութիւնիցն յառաջ եկաւ այն խօսքն որ ասաց, կամ այն գործն, որ արաւ իւր տանը մէջ ունեցած իւր ազատ՝ անքննադատ վարմունքին նայելով, աւելի անաչառ, աւելի արդար և ուղիղ կերպով կարող է դատել իրան իւր

ընտանիքից մէկն, քան թէ դուրսը նորան տեսնողներն ու ճանա-չողները: Բայց մեր ներքին մարդուն դատում է միայն ամենագէտ մեր Տէրն: Միայն ամենուրեք եղող Տիրոջ առաջը մահկանացու մարդս այն չէ, ինչ որ դրսից երեւում է, այլ իսկապէս այն, ինչ որ է ն—ր Վէջն իւր արժանաւորութիւնովն ու անարժանութիւնով:

Սրբեմն Աստուած ինձ դատում է ոչ թէ այն խօսքերովն, որ ուրիշների առաջն ասում եմ, ոչ թէ իմ դրսի գործքովն, այլ իմ ծածուկ դիտաւորութիւններովն, իմ ունեցած մտքերովն, որ ուրիշ ոչ մի ադամորդու յայտնի չէ:—Ամենագէտ Տէր, Դու, որ իմ ամէն մի օր ունեցած մտածմունքներս կարգով մին մին պարզ տեսնում ես, Դու, որոյ առաջին ծածուկ բան չէ կարող մնալ, ինչպէս պէտք է քո առաջ կենամ:

Ա՛խ, մեք ինքներս մեզ խաբումենք շատ ու շատ անգամ նաեւ այն ժամանակն, երբ որ Աստուծոյ առաջ ունեցած մեր արժանաւորութիւնը կամ անարժանութիւնն որոշել ենք ուզում: Երբ որ մեք մի ամբողջ օր օգտակար բան ենք անում, կամ լաւ գործ տեսնում. այստեղ՝ մի աղքատի ողորմութիւն ենք տալիս, այնտեղ՝ մի հիւանդի հասնում, օգնում, մի ուրիշի մխիթարում, մի երրորդ մարդու՝ լաւ խորհուրդ տալի. մեր թշնամիներից մէկի հետ բարութեամբ ենք վարվում, վէճ, կռիւ հեռացնում, խաղաղութիւն քցում՝ այն ժամանակ հաւատումենք մեզ, որ օրուան մէջ մեր կատարած գործերովն կարող ենք գոհ լինել: Այն ժամանակն արդէն յոյս ենք ունենում ու սպասում ենք, որ Աստուածանից շատ օրհնանք ու գովասանք կստանանք ու կլսենք իբրեւ մեր գործերը քննող ու դատող արդար Դատաւորից: Ինչպիսի շլացութիւն, որպիսի կուրութիւն է այս մեր կողմանէ, որ կարծումենք թէ՝ Աստուծոյ աչքը մարդոց աչքի նման միայն մեր գործերն է տեսնում, եւ ոչ մեր մտքերն, որ ունէինք մեր այդ գործերը կատարելու միջոցին: Աստուած դատում է մեր սիրտն ծածուկ եւ անձայն՝ մեր արած գործերն, որ բնաւ ոչ ոքի ականջին չեն ընկնում, ոչ ոքի աչք չէ տեսնում: Մարդս՝ գործքով այնքան շատ չէ մեղանչում, որքան սրտովն, որոյ մէջ բերնից չհանելու շատ ու շատ ցանկութիւններ, փափագներ կան ծածկած, որոց վերայ շատ է մտածում ու լուռ ու մունջ էրվում՝ ոչ յայտնել եւ ոչ հասնել կարողանալով:

Շատ մարդիկ կան, որ երեւակայումեն թէ՝ ինչ որ ուրիշներին

վնաս չէ բերում, մեղք էլ չէ։ Սորա համար իրանց թոյլ են տալիս թէ վատ բան մտածել ու թէ ցանկանալ, իրանք իրանց մէջն ասելով թէ՝ բաւական է, որ իրանց կեանքի մէջ ձեռնամուխ չեն լինում ու չեն եղել անելիս գործովայն բաներն, ինչ որ մտքներից անց է կացել։ Բայց նոքա իրանք իրանց խաբում են ու չեն մտածում, որ վատ բանն արլն իրօք՝ ոչ թէ մարդոց առաջն, որոնցից քաշվում էին, որ վատ մարդ չճանաչուեն իրանց գործովն, բայց փոխարէս Աստուծոյ առաջն, որից չամաչեցին ու չվախեցան։ Նոքա մեղքն իրօք գործեցին, որովհետեւ իրանց մտքից անց կացրած վատ բաներովը, թէեւ ուրիշներին իրօք մի վատութիւն չարին, բայց իրանց սրտի խորքում՝ մեղանչական հակումներով՝ իրանք իրանց արատաւորեցին, ապականեցին ու վատ բանն անելու համար իրանց հասունացրին։

Յիսուս Քրիստոս սարից տուած իւր քարոզի մէջն այս խօսքերն ասաց. «Դուք լսել էք, ինչ որ ասուեցաւ առաջուայ մարդոցն, դու շնութիւն պիտի չանես։ Բայց ես ասում եմ՝ ձեզ. ով որ կին մարդու վերայ մտիկ կտայ, նորան ցանկանալու մտքով, արդէն իւր սրտի մէջ նորա հետ շնութեան մեղքը գործեց»։

Շատ անգամ պատահում է, որ մարդս իւր պարապ միջոցներումն երբ որ մենակ է, կամ մենակ զբօսնում է, կամ գիշերը քունը փախչում է, ինքն իրան տալիս է իւր վատ ցանկութիւններին ու նորանց վերայ մտածում։ Մարդս իւր երեւակայութեան խաղերի ու խաբէութեան մէջ զուարճութիւն է գտնում. ինչպէս որ մեր քնի մէջ մեզ զբաղեցնում են երազներ, որ իրանք իրանց գալիս են ու մեք, ուզենալով չէ, որ տեսնում ենք, այնպէս էլ մեր զարթուն ժամանակն՝ ոչ թէ չուզենալով, կամ մեր կամքի ընդդէմ, այլ մեր ուզենալովն երազներ ենք տեսնում ու այն բաներն, ինչ որ մեր սրտին դիւրեկան է։

Մեր համար սովորութիւն է դարձել ու հասարակ այդպիսի ցնորքներն անմեղ բան համարել. այդպիսի ցնորքների անունն էլ օդի մէջ շինած ամրոցներ են ասում և այնպիսի ամրոցներն, որ մեր մտքի մէջ շինում ենք այնքան ժամանակ մեր միտքը զբաղեցնում են, որքան ժամանակ որ քաշում է այդպիսի բաների վերայ մեր մտածելը. մեք այնպիսի յատակագծեր ենք շինում, որ իրօք գլուխ բերել չպիտի կարողանայինք ու մեր մտքումը խօսում ենք այն անձանց հետ, որոնց հետ երբէք խօսելու չենք։ Եւ որովհետեւ

այսպիսի մտքեր անելն ամենևին մի վնաս ունեցող բան չենք համարում, այդ պատճառով մտքներիցս հագիւ թէ անց կենայ այդպիսի բանի համար մեզ յանդիմանելն: Այդպիսի գիժ ու միժ բաներ միտք անելու համար չենք հաւատում, որ պատասխան պէտք է տանք, ինչու որ ինքներս մեզ ասումենք թէ՝ ինչ որ այդպիսի բաներ միտք ենք անում, բոլորն էլ դատարկ ու անտակ բաներ են, ի՞նչ վնաս ունին: Ուրիշ բան էր, եթէ որ ուրիշներին վնաս տալու համար յատակագծեր շինէինք ու այդ մեր մտքում սարքած բանն գործով կատարելու դիտաւորութիւն ունենայինք: Չար միտքն, երբ որ մեր գլխումը դնումենք, չար գործի կէսն է արդէն, յետոյ կատարել ենք, թէ չենք կատարել: Բայց մեք այնպէս ենք. ամենևին բանի տեղ չենք դնում այդպիսի դատարկ բաներն, որ միտք ենք անում. էլ չենք ասում թէ՝ դատապարտելի են մեր երևակայութեան այդպիսի դատարկ խաղեր անելն անգամ, թէ և մեր խելքովը մի զուարճութիւն համարենք մեզ համար, որ մեզ երկար թուող մի քառորդ ժամը շուտ անց կացնենք: Աստուծոյ առաջ մեր աղօթք արած ժամանակն, երբ որ մեր սիրտն ամեն կողմից քննումենք, քիչ է պատահում մտքներս ընկնի, որ մեք այդպիսի ցնորքների վերայ շատ անգամ մտածել ենք, զուր ժամանակ կորցրել, զուր մեր սիրտը վրդովել, զուր մեր հանգստութիւնը կորցրել, ամեն առաւօտ, որ անկներիցս վեր ենք կենում ու նոր նոր բաներ ենք մտքներումս դնում անպատճառ անելու և կատարելու, կարծեմ, շատ քիչ է պատահում հաստատ մտքներումս դնենք այն էլ որ, այդպիսի անպիտան բաներ մենք միտք անելով ժամանակ անց կացնելուց հեռու կենանք:

Բայց մեր ամեն մի այսպիսի մտածմունքը՝ մեր մտքի ու սրտի գործողութիւնն է, որ ցոյց է տալի յայտնի կերպով թէ՝ մենք ինչ ենք [illegible], ինչ հակումներ ունինք, որ մեր սրտումը ծածկումենք և ուրիշներից թագցնում՝ և թէ ինչ բաներ անելու ընդունակ կլինէինք, եթէ որ ամենայն արտաքին հանգամանքները մեզ համար յաջողակ լինէին: Այս մեր [illegible], ինչպէս որ կայ ճշմարտապէս, բայց ի Աստուածանից ոչ ոք չգիտէ:

Կարո՞ղ էր արդեօք մէկն, ինչ որ ժամանակ ժամանակ իւր մէջը միտք է արել, բառ առ բառ և առանց ծածկելու պատմել մի մարդու, որին որ շատ քաշվումէ իբրև մի շատ պատուաւոր

մարդուց։ Ի՞նչպէս պիտի կարմրէր մէկն, եթէ որ իւր մտքինը յայտնուէր. ու խայտառակուէր։ Բայց ի՞նչպէս չենք ամաչում մենք ամենագէտ Աստուծուց, որ մեր ծածուկ մտքերի ու ցան-կութիւնների ունայնութիւնը միշտ տեսել է ու տեսնումէ։ Ինք-ներս մեզանից չե՞նք սարսափում, որ մեզ թոյլ տուինք անարժան բանը մտածելու և այնով ծածուկ մեր ամօթը, պատկառանքն ու պատիւը մեզանից վերացնելու։ Ով որ այսպէսով իւր պատիւն իւր իսկ առաջը այնքան կորցրել է, որ սրտին ցաւ չէ տալի պիղծ մտքի տէր մարդոց կարգն իրան անցնելու, ճշմարիտն ասեմ, այդ-պիսի անմաքուր մտածմունքներ ունեցող մէկն մարդոց առաջը մի կեղծաւոր է, ոչ թէ Աստուծոյ զաւակ. նա, ինչպէս ասաց աշխար-հի Փրկիչը փարիսեցոց համար, կրով ծեփած գերեզման է, որոյ մէջ ոսկորներ ու պղծութիւն է։

Այս թեթևամտութիւնով մեր միտք արած այդպիսի վատ բա-ներն էլ, որոնցով մեք զուարճանումենք և որոնք որ թոյլատրուած չեն մեզ, ընդհակառակն արգելուած ու աններելի, որովհետև աններելի ցանկութիւններ են շարժում մեր մէջ, իսկապէս մեղք բան են. մեծ վտանգներ դուրս կգայ դորանցից։ Այդպիսի մտած-մունքները մեր միտքն ու սիրտը ծածուկ ընտանեցնումեն վատ գործի հետ. մեզ համար սովորական մի բան շինում վատ բանի վերայ թէ միտք անելն, թէ մտիկ տալն, և դորանով փչացնու-մեն մեր մէջ այն զգացմունքն, որ ունինք ազնիւ բանի համար. այդ մտքերն մեր սրտի սուրբ տաճարը կամաց կամաց մի սովորա-կան տեղ են շինում ամօթալի բանի համար, այն մեր մաքուր և անարատ սիրտն, որին ամօթ ու անպատուութիւն բերող մտած-մունքն՝ իբրև իրան անծանօթ մի սուրբ տեղի՝ ամենևին չպիտի մօտենար բոլորովին անտես, անճանաչ մի օտարի նման։

Զարմանալու չէ, որ երբեմն փոքրահասակ պատանիներն, որ, ինչպէս վրաներից երևումէ ամենալաւ կրթութիւն են ստացել, անակնկալ կերպով ճամբից դուրս են գալի, երբ իրանց գլխին են մնում։ Ա՜խ, որ նորանք վայրենանումեն, անբարոյականութիւն-ներ անում, չըկարծէք թէ յանկարծ փոխուեցան այդպէս վա-տացան. նոցա երևակայութիւնն իրանց վատ ճանապարհ ընկնե-լուց շատ առաջ արդէն թունաւորուած էր. նորանք վաղուց ար-դէն վայելումէին անվայել բանի քաղցրութիւններն իրանց երև-ակայութիւններ անելով։ Ինչ վատ բաներ որ շատ ու շատ ան-

գամ երևակայել էին, գործով և ողորդ կատարել դեռ շատ քաշվում էին և իրանց շատ ծանր էր թվում. բայց իրանց սիրտը մաքուր չէր, ու չար ցանկութիւնը յաղթեց։

Ինչ անվայել ցանկութիւններ որ մարդս ունի իւր սրտումը խոր թաղած, այնպիսի երազներ էլ տեսնումէ, կամ այնպիսի ցնորքներ էլ ունենում իւր զարթուն ժամանակն։ Ով որ մտքով գեղխ կերպով վայելումէ արգելած պտուղներն, յանցանքի հետ բանագնացութիւն է անում արդէն։ Նորան պակաս են միայն արտաքին յաջողութիւններ, որ ամօթալի գործը կատարի։ Այդ միջոցներին, եթէ պատահմունքը բերումէ, ցանկութիւնը սաստկանումէ ու շտապում իրօք հասնելու այն բանին, որոյ նախաճաշակը միայն մինչև այժմ թոյլատրուած էր իրան գրաւելու գրգռիչ երևակայութիւններովն։

Այսպէս շատ անգամ մեր ցնորքներն, կամ այն երազներն, որ՝ մեր ըղձերուն տեղը՝ մեր երևակայութիւններում ծնուեր ու տևելով, մեր սիրտը նախապատրաստում էին գործելու մի մեղք, որ մեզանից հեռու բան էր ու մեզ անծանօթ ու որն որ կամաց կամաց մեզ լաւ թուեց մեր անվայել բաներ երևակայելովը։ Այսպէս էլ մէկն, որ հասարակութեան մէջ ողջախոհութեան ու անմեղութեան տիպար կարող էր համարուել ուրիշների առաջ, որ երկմտի խօսքերից կարմրումէ և ամաչելուցն ամօթու երեսը շուռ է տալի մի անպարկեշտ բանից, մեղք գործելու համար հասունացած է, հէնց ասենք թէ՝ գործել է, իւր երևակայութեան մէջ։ Ինչու որ անպարկեշտ երևակայութիւններովը սիրան արատաւորել է և անմեղութիւնն Աստուծոյ առաջ կորել է։ Ընտելանալով մոլութեան՝ երևակայութիւններով, թեթևամիտ մէկ պատանու կամ օրիորդի համար բաւական մօտ է ամօթալի գործի խարխոբանն, որ՝ մի քայլ ճանապարհից ծռուեց թէ չէ, մէջն ընկնի։ «Դուք լսած էք, որ հիներին ասուած է, դու չպիտի շնութիւն անես։ Բայց ես ասում եմ ձեզ, ով որ մի կնոջ վերայ մտիկ կտայ նորան ցանկանալու մտքով, նա արդէն շնութիւնն արեց իւր սրտումն»։

Ունայն և անմիտ ցնորքների խելքը տալն՝ ուրիշ կողմերից էլ կարող է սրտի ազնուութեան վնաս բերել։ Որքան էլ անվնաս բան համարենք, երբ որ զօր օրինակ մէկն, երբ որ յոյս ունի մի պաշտօն ստանալու և իւր պարապ րոպէներումն ուրախանումէ իւր ապագայ արժանաւորութեան ու աստիճանի հասնելու երևակայու-

թիւններովն, մտածելով թէ ինչպէս նշանակութիւն և անուն կստանայ, ինչպէս իւր հակառակորդների նախանձը կշարժի իւր վերայ, ինչպէս իւր թշնամիներին կյաղթի. Թէև այսպիսի երեխայական ու ծիծաղելի բաներ երևակայելն ուրիշների համար վնաս չունենան, բայց երևակայողի համար այնպիսի վարժութիւններ անել է նշանակում, որ իւր հպարտութիւնն, ունայնասիրութիւնն ու չարախնդացութիւնն են ցոյց տալիս։ Այդպիսի դատարկ բաներ մտքից անց կացնելը նորան տանում են դէպի մեծամտութիւն. և թէև այն պաշտօնն ու պատուաւոր աստիճանն, որ յոյս ունէր ստանալու, ձեռք էլ չբերի, բայց և այնպէս անուն հանելու, պատուի հանելու և ուրիշների նախանձը շարժելու կրքոտ ցանկութիւնն ու փափագն իւր սրտից դուրս չիգալ։

Ամեն խելօք մարդ՝ օդի մէջ ամրոցներ շինել է ասում ահա այսպիսի բաներին՝ երբ ու մէկը մեծ յոյս ունի, որ մի նշանաւոր ժառանգութիւն կստանայ, կամ վիճակախաղից իրան մի մեծ գումար դուրս կգայ, կամ մի ուրիշ անակնունելի բաղդաւորութեան կհասնի դիպուածի յաջողելովը՝ առաջուանից այսպիսի երազներ է տեսնում իւր մտքումն, այսպիսի բաներ երևակայում. ինքն իրան մէջ ասումէ թէ՝ բաղդս՝ որ բերելու է ու այս երեք բանի մէկը կըկատարուի ու՝ մի հրաշքով՝ յանկարծ հանգամանքներս բոլորովին կփոխուին ու կլաւանան, այն ժամանակ տունս կգեղեցկացնեմ, սեղանիս վերայ լիքը կլինին տեսակ տեսակ համով հոտով պատուական կերակուրներ. այնպիսի կահ կարասիք ու հագուստներ կունենամ, որ ամենի աչքը վրան մնայ, զարմանան, ու հիանան իմ վերայ, բոլոր ինձ հետ ծանօթներն ու մեծամեծ մարդիկ ցանկանան ինձ հետ բարեկամանալ։ Այնպիսի երևակայութիւն անելն, այնպիսի յոյսերով իրան խաբելն, թէև օդում ամրոցներ շինել ենք ասում, բայց շատ մարդիկ կան, քան թէ կարծումենք՝ լինէին, որ այդպիսի անհիմն ու դատարկ բաների իրանց խելքն ու միտքը տալով, իրանց երևակայութիւնը տաքացնումեն։ Իրանց սրտումը գնումեն աննշմարելի կերպով շատ ու շատ այնպիսի բաներ ունենալու, որ մեզ համար բոլորովին աւելորդ են և բոլորովին զուր ենք ցանկանում ունենալ, որովհետև առանց նորանց էլ կարող ենք ապրել. իրանց սրտի մէջ զարգացնումեն ցանկութիւն մեծ մեծ ծախքեր անելու, հարստանալու, անդադար փողեր ձեռք բերելու. Աստուծոյ իրանց

պարգևներից դժգոհ են լինում և իրանք իրանց զրկումեն ներկայ հանգամանքների բաղդաւորութեան անպղտոր վայելչութիւնից։

Անթիւ օրինակներ կարելի է բերել, որոնցից յայտնի կտեսնուէր թէ՝ ինչպէս սխալական են անձերութեան, պարզմտութեան, սրտի հանգստութեան ու գոհ ապրելու համար այսպիսի զատորկ և անմիտ բաներն, որ մեք մեր գլխին գնում ենք մեր կամքովն, մեր զարթուն տեղն այնպիսի երազներ տեսնելով, որ կատարուելու չեն. սկզբումն ինչպիսի անմեղ հակումներ են մեր մէջը այդ մտածմունքներն գնում և յետոյ ինչպիսի կործանական իշխանութիւն են ստանում մեր սրտի վերայ շատ անգամ։ Մի բան էլ միայն ասեմ, որ հարկաւոր եմ համարում. այնպէս էլ պատահում է շատ անգամ, որ մեք՝ ուրիշից ընդունած մի վիրաւորանք, երբ որ վրան շատ մտածումենք, այնչափ ենք մեծացնում, որ ծայրայեղութեան ենք հասնում, ահագին բան չլինում մեզ համար։ Մտածելով այն տեղն ենք հասնում, որ մեր անարգանութեան գլխաջոյնն, մեզ վիրաւորողն՝ մեր ամենավատ թշնամին է. սրտներումս ատելի ոխ ենք պահում նորա դէմ ու մտքներումս սարքում, գնումենք թէ ինչ կերպով ինչ ճանապարհով նորան այնպիսի մի վատութիւն անենք, որ էլ ուրի ու հովութիւն չգտնի։ Բայց յետոյ բանից շատ անգամ խնդալէս այն դուրս է գալիս, որ մեք մեր կրքից տարուել ենք, փոքր բանը չափից դուրս մեծացրել, որով մեր սրտի հանգստութեանն աւելի մեծ վնաս ենք բերել, քան թէ այն մարդն, որ, կարելի է, մտքից մի վատ բան էլ չէ անցկացրել մեր մասին և մինչև անգամ թէ՝ ամենևին չէ կարծել, որ իւր վարմունքն այդպիսի մի մեծ փոթորիկ հանած լինի մեր սրտումը։

Թէև մեր պարապ բաղձներումն մտածած հարկաւոր այդպիսի բաներն անհետևանք են մնացել, ինչու որ այնպէս շուտ մոռացուել են, ինչպէս որ շուտ մեր մտքին եկել էին. բայց այս հարկաւոր անգամ մեր մտքով անց կացածն, իւր շատ յաճախ կրկնուելովը, մեզ հասկացրել է, որ իւր իշխանութիւնը քո վերայ արդէն բանեցրել է. թէ քո մէջդ մի անազնիւ կիրք ես տածում, որ քանի գնացել է, աւելի և աւելի զօրացել է. թէ դու քո մէջդ էլ այնքան ազատ, մաքուր ու աշխատասէր չես, ինչքան որ դրսից երևումես. թէ դու շատ անգամ Աստուծոյ առաջը մեղանչել ես, երբ որ մարդիկ քեզ դեռ առաքինի էին համարում։

Աստուած դատում է մեղաւորներին։ Աստուած դատում է ոչ թէ միայն նորա արտաքին գործերին, այլ և մեր գործերի աղբիւրներին, որ օտար մարդոց առաջը ծածկում ենք։ Մտածմունքներն՝ մեզ անյայտ գործեր են, երևակայութեան յանցանքը՝ լուռ ու մունջ մեղքեր են։

Հեռու կաց երևակայութեանդ ամեն անպատուղ խաբէութիւններից․ Սրտէն ինքն իրան խաբել ուզենալն կեանքի մէջ տրած յիմարութիւնների կարգումն է համարւում․ իսկ բոլորովին անօգուտ բան մտածելը նշանակում է այնպիսի ժամանակ կորցնել, որոյ մէջը շատ աւելի օգտակար բան պէտք է մտածէինք, ուրեմն կորցրեցինք այնպիսի մի ժամանակ, որ ոչ մի փողով չի գնուիլ։ Հեռու՛ կաց խելքիդ եկած օտարոտի և անհիմն մտածմունքներից, որ քո ունեցած յոյսերդ ու ցանկութիւններդ կկատարուէին, բոլորովին գոհ կլինէիր ու քո ուրախութիւնիդ ուրախութիւն չի հասնիլ։ Զգուշացիր, աղաչեմ, այդպիսի անտակ մտածմունքներից, որովհետև դորանք են, որ քո ցանկութիւններիդ խիթան են դառնում դէպ ի չար բանն։ Երբ որ գիւր է գալի քեզ այնպիսի բաներ մտածելն, որ քո անմեղութիւնդ, խոհեմութիւնդ, քիչ բանով գոհ ապրելուդ ու սրտիդ հանգստութեանը համար վտանգաւոր են, մտքից հանիր, դէն քցիր, ուրիշ բանով զբաղուիր․ խելքի կաց, սիրտ առ, տղամարդութիւն արա՛ ու մի՛ թողնիլ քեզ, որ քո երևակայութեանդ լոկ մի գրգիռն անգամ քեզ լաւ թուի, ընդ հակառակն ամենևին բանի տեղ մի՛ դնիլ։ Հեռու կաց ակամայ անտակ բաներ մտածելուց, եթէ որ ուզում ես ինքդ քո գլխիդ տէրը լինիս, պատճառ որ ինչքան շատ խելքդ տաս այդպիսի մտածմունքների, քանի կերթան, այնքան աւելի ուժով կգան, գլուխդ կմտնեն, և որչափ որ ցանկութիւնն իւր հաճելի երևոյթներովն աւելի զօրանում է մեր մէջն, այնչափ աւելի հրամայաբար պահանջում է կատարումն։ Դու ինքդ քո մտքիդ ցնորքների գերին կդառնաս և կտանջուիս այդ անտեղի ու անհիմն մտածմունքներիդ զոհել քո պատիւդ, քո անմեղութիւնդ, քո մաքուր խղճմտանքդ, քո ուրախ սիրտդ ու կեանքիդ հանգստութիւնն։ Վատ ընկերութիւնն ապականում է լաւ բարքն, աստուած մի հին ու շատ անգամ գործով հաստատուած առած․ մենք էլ աւելացնում ենք այս խօսքի վերայ թէ՝ մարդուս հէնց իւր ի-վատ մտածմունքներից աւելի վատ ընկերութիւն չկայ ու չի լինիլ

Ա՛խ, Ամենագէտ իմ Տէր, սաստիկ ամաչելուցս աչքերս ցած եմ քցում Քո առաջ։ Խոստովանվում եմ, որ շատ ու շատ է պատահել խելքս միտքս տալն իմ գլխումս դրած՝ ինքս ինձանից շինած չկատարուելու երազների նման անհիմն ու անտեղի մըտածմունքների, որ մի քանի րոպէ իմ սիրտս ուրախացնելու համար գլխիցս հնարել եմ, բայց վայրենի ու կեղտոտ մտքերի հետ խառնուել են և այս ու այն անպատկան բանի հակումն իմ մէջս զարթեցրել։ Ես բաւական կորցրել էի ինքս ինձ ու վատացել, երբ որ անպատկան բանը պատշաճ ու պատկան էի համարում իմ երևակայութիւններիս մէջն ու մոռանում էի, որ Դու՝ ամենուրեք իմ Աստուածս ես, Որոյ առաջին ոչ մի ծածուկ բան չկայ մեր կրքերի փոթորիկների մէջ։ Տէր, ո՞վ կարող է հաշիւ պահել, թէ քանի անգամ Քո առաջ մեղանչել է։

Խոստովանվում եմ, որ իմ կեանքիս ամենափոքրիկ մասն է միայն քեզ եւ մարդոց էլ ընդունելի, որոյ մէջ իմ լաւ մտածմունքներս ցոյց եմ տուել ու տուել գործերովս. իսկ կեանքիս ամենամեծ մասն լիքն է իմ անտեղի ու անտակ երևակայութիւններովս, իմ մտքումս արած ծածուկ ու անձայն դատողութիւններովս ու իմ միշտ գործունեայ երևակայութեանս սուտ ու խաբեբայ պատկերներով։ Եւ ափսոս, որ իմ կեանքիս ամենամեծ մասին վերայ մինչև ցայժմ ամենից քիչ եմ ուշ դրել։ Դեռ որքան դատարկ և ունայն մտածմունքներ եմ արել, որ այժմ բոլորովին մոռացե՜լ եմ։ Բայց Դու էլ, տեսնենք, մոռացե՞լ ես, իմ արդար երկնաւոր Դատաւոր ու Թագաւոր։

Ո՛վ երկնաւոր իմ Հայր, ճանաչել եմ սկսում իմ ծածուկ շատ ու շատ յանցանքս, որոց մասին իմ կեանքումս շատ քիչ եմ մըտածել։ Բայց այս իմ յանցանքս ճանաչելուս հետ սրտանց ու սաստիկ զղջում եմ ու զղջումս հետն էլ հաստատ դնում եմ մըտքումս, որ այսուհետև ինքս ինձ վերայ միշտ հսկեմ և զգոյշ կենամ որ և իցէ անկարգ ու անմիտ բաներ մտածելուց։ Օգնիր ինձ բարերար ու մարդասէր Տէր, Քո աստուածային շնորհութիւնովդ ու զօրութիւնովդ։

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

(Շարունակ. Արարատ, 1883 Թ. Ը.):

ԳԼ. ԺԵ.

Յոլհաննէս Մեծաբարոյին ազգային ընտրութեամբ 1220 Թ. յաջորդեց Կոստանդին Ա. Բարձրաբերդցի։ Կոստանդին կաթուղիկոս և Հայ իշխանները երդումն առնելով Անտիոքայ Լատին կոմսի Փիլիպպոս որդւոյ, որ նա Հայադաւան և Հայասէր լինի, Զապէլ Թագուհուն ամուսնացրին նորա վերայ և մեծաշուք հանդիսով Հայոց Թագաւոր օծեցին. բայց Փիլիպպոս հակառակ իւր երդման՝ սկսեց արհամարհել Հայերին և Հայ եկեղեցու արարողութիւնը, և, ոչ միայն սէր սկսեց տածել դէպ ի կաթոլիկ եւրոպացիքը, այլև արքունի Թագը և պալատի մեծագին սպասները ուղարկեց Անտիոք իւր հօր տուն *)։ Այս իսկ պատճառով բոլորովին ատելի դարձաւ, և երբ միանգամ կամենումէր Անտիոք գնալ՝ կալանաւորուեց ու երկամեայ իշխանութիւնից յետոյ բանտ դրուեց, ուր և մեռաւ։ Զապէլ, ի մօրէ լատին, Փիլիպպոսի մահից յետոյ գնաց Սելևկիա իւր ազգականների մօտ և կամենումէր կուսանոց մտնել, բայց Հայ իշխանները ստիպմամբ յետ դարձրին և ամուսնացրին Հայկազանց և արշակունի ցեղից սերեալ և Լամբրօնի ու Ռուբինեան տան հետ խնամական կապերով միացած Կոստանդին իշխանի Հեթում որդու հետ, որին և, 1224 Թուին Կոստանդին կաթուղիկոս Թագաւոր օծեց։

Մինչ Հեթում Թագաւոր և իւր Կոստանդին Հայրը իրանց աշխարհաշինութեամբ Կիլիկեան տեղի ապաստանի էին դարձրել Չինգիզխանի, Ջալալէդդինի, Չարմաղանի, Բաչուի և այլ Թաթարական և մահմետական բռնաւորների սրից ազատուած և ազատուել ցանկացող Հայոց, և մինչ Կոստանդին կաթուղիկոս այս աշխարհաշէն կառավարութեան շնորհիւ վանքերը բարեկարգումէր յատուկ հասոյթներ նշանակելով, եկեղեցականաց բարե-

(*) Վարդան Մեծ. տպ. ի Վենետ. 1862. յեր. 141։

կարգութեան և Հայ տառապեալց բարեկեցութեան համար էր-հոգում, Հռովմայ պապը դրդուած Անտիոքայ լատին պատրիարքէն, առանց Հայ ժողովրդի գրութեան վերայ մտածելու պապական իրաւասութեան և գերիշխանութեան խնդիրն արծարծելով, այդ խնդրով էր ուզում զբաղեցնել Հայերին։ Կոստանդին այս անտեղի խնդրին վերջ տուեց սիրոյ և յարգանաց թուղթ գրելով պապին, իսկ ինքը 1243 թուին Սսոյ Բ. ժողովը գումարեց, ուր 25 յօդուած կանոններ սահմանուեցին, ի յարգանս պապի առաջարկութեան՝ Վերջին օծման խորհուրդը իւղով կատարել որոշելով, որ անընդունելի մնաց և Հայք ըստ ազգային սովորութեան դարձեալ այդ խորհուրդը միայն աղօթքով կատարելով շատացան։ Կոստանդին Ա. ժողովի որոշումները Վարդան Մեծ կոչեցեալ վարդապետին յանձնելով շրջաբերական կոնդակով ուղարկեց արևելք։

Լատինք չէին բաւականանում ծիսական փոփոխութիւններ պահանջելով, այլ պահանջումէին որ Հայք ըստ լատինաց՝ Ս. Հոգին Հօրից և Որդուց բղխած դաւանեն։ Լատինաց այս առաջարկը քննելու համար Կոստանդին կաթուղիկոս Հեթում թագաւորի հաճութեամբ Սսում ժողովակ կազմեց, և ինքնին չըխոստահանալով մի որոշում տալ՝ դիմեց Արևելեայց, որոնց կողմից գիտութեամբ և իմաստութեամբ հռչակեալ Վանական վարդապետը գրեց պատասխանի, համառօտելով Հայ եկեղեցւոյ դաւանութիւն Ս. Հոգու բղխման համար*)։ Կոստանդին կաթուղիկոս Վանականի թուղթը ստանալուց յետոյ անհասանելի խորհրդոյ քննութիւնից խոյս տալու համար՝ յարգելով քրիստոնէական եղբայրսիրութիւնը սիրոյ թուղթ գրեց պապին առանց ընդդիմաքանելու լատին եկեղեցւոյ վարդապետութեան։

Այն օրից, երբ Հայ թագաւորք և իշխանք սկսեցին յարաբերութիւն ունենալ Անտիոքի, Սելևկիոյ և այլ տեղեաց կաթոլիկ դքսերի և իշխանների հետ նոցա աղջկանց վերայ ամուսնանալով՝ այս աղջկանց հետ պապական ազդեցութիւնը մուտ գործեց Հայ արքունեաց մէջ. և այս ազդեցութեան շնորհիւ պապերը սկսեցին յարաբերութիւն՝ զանազան պահանջներ անելով, որոնք վտանգաւոր հետևանքներ ունեցան Հայ ազգի և եկեղեցու համար։ Վասն

(*) Կոր. պատմ. տպ. ի Մոսկ. 1858. եր. 196—206.

զի, մահմետական իշխանութիւնները, որ չէին մոռացել Խաչակրաց Արշաւանքը, տեսնելով հայ արքունեաց և հայրապետանոցի յարաբերութիւնը Հռոմի հետ, վրիժառութեան ոգւով գրգռած յարձակվումէին Հայոց վերայ: Ամենից մեծ հարուածը տուեց Եգիպտոսի սուլթանը, բազմաթիւ զօրք ուղարկելով Կիլիկիա, երկիրը աւերակ դարձնելով, Հեթմոյ Թորոս որդին պատերազմում սպանելով և Լևոնին գերի տանելով Եգիպտոս: Այս չարաշուք ժամանակին 47 ամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ 1267 թուին վախճանեց Կոստանդին Ա. և 1268 թուին յաջորդեց Յակոբ Ա. Տարսոնացի:

Յակոբ Ա. որ Կլայեցի է կոչվում՝ Հռոմկլայում հայրապետական իշխանութիւն վարելուն համար, ընդհանուր պարտաճանաչութեան համար՝ Շնորհալու ընդհանրական թղթերը ընդօրինակել տալով՝ ուղարկեց այն գաւառներին՝ որոնց ուղղել էր ինքն Շնորհալին: Յակոբ Կլայեցին, որ մեծամեծ գովեստներով է յիշատակվում պատմութեան մէջ՝ վախճանեց 1287 թուին: Լևոն Գ. թագաւոր կամենումէր Գրիգոր Անաւարզեցուն կաթուղիկոս ընտրել տալ, բայց Հայք համաձայն չէին, համարելով Անաւարզեցուն յունամիտ և հռոմ: Անաւարզեցու հակառակորդների շարքումն էր նաև Սիւնեաց Տարսայիճ իշխանի որդին Ստեփաննոս վարդապետ Օրբելեան, որ գնացել էր Կիլիկիա՝ Սիւնեաց եպիսկոպոս ձեռնադրուելու: Ոմանք կամենումէին սոյն այս Օրբէլեանին ընտրել, բայց դժկամակողները արգելք եղան՝ նորա խորխտ և մեծամիտ լինելը պատճառ բերելով: Ուր ուրեմն, Սսում գումարուած ժողովում ընտրուեց Կեսարիոյ արքեպիսկոպոս Կոստանդին Բ. Պրօնագործ որ 1288 թուին Աւագ Շաբաթ օրը սուրբ օծումն ընդունելուց յետոյ հետևեալ օրը, Զատկի Կիւրակէին Ստեփաննոս Օրբելեանին ձեռնադրեց Սիւնեաց արքեպիսկոպոս:

Նոյնպէս գժտութիւն ընկաւ Կոստանդին Բ-ի և Լևոն Գ-ին յաջորդող Հեթում Բ-ի մէջ, որ թագաւորելուց յետոյ մի լատին Յովհաննէս կրօնաւորի ուղարկումէ պապի մօտ, նորան իւր յարգանքը և սէրը յայտնելու համար, իսկ կրօնաւորը պապի առաջ հայ եկեղեցին հերետիկոս և հայ հայրապետանոցը պապական իշխանութեան դէմ ըմբոստ անուանելով՝ գովումէ Հեթումին որպէս լատինականութեան համամիտ և ընդունող պապի գերիշխանութիւնն ու իրաւասութիւնը հայ եկեղեցու վերայ:

Պապը առանձին թղթով յանուն թագաւորին գովում է նորա տածած զգացումները դէպի պապական աթոռը, և յորդորում է որ Հայ ազգին ու եկեղեցուն ևս իւր զգացմունքը հաղորդ կացուցանէ։ Հայք լսում են այս, լսում է և Կոստանդին կաթուղիկոս. սկսւում է մեծ յուզմունք և Հեթում Բ. Սսում ժողով կազմելով 1290 թ. գահընկէց է անում Կոստանդինին ու աքսորում, և նորա տեղ Ստեփաննոս Դ-ին է կաթուղիկոս ընտրել տալիս, որ Հռոմկլայում սնուած լինելուն համար Կլայեցի է կոչւում։ 1202 թուին պատահելով ծառազատիկը, Հեթումի հրաւիրանօք Ստեփաննոս Դ. Սիս է գնում և թագաւորի հաճութեամբ որոշում է Զատիկը Յունաց հետ Ապրիլի 6-ին տօնել. սակայն այս որոշումը Կիլիկիայում միայն է գործադրւում, իսկ Հայք ըստ նախնի սովորութեան՝ մի շաբաթ յետոյ են տօնում։

Մինչ Հայք Հեթում Բ-ի անտեղի կրօնասէր բերմամբ զբաղեալ էին Հռովմայ առաջարկութիւններով և ծառազատիկի խնդիրներով, Եգիպտոսի սուլթանի որդին Աշրաֆ տապալելով Կիլիկիայի ծովեզերքը, մեծ աւարներով դարձաւ Եգիպտոս և նորից Պաղեստինի վերայով մտաւ Եփրատացւոց աշխարհը. պաշարեց և առաւ Հռոմկլայի եօթնպարսպեան գղեակը, բազմաթիւ ժողովրդեան հետ գերեց և կաթուղիկոսին, աւերեց և աւար առնելով Հայրապետանոցի և հայրապետական եկեղեցու թանկագին սպասներն ու սուրբ Լուսաւորչի աջը, երբ կամենում էր գերեալ Ստեփաննոս կաթուղիկոսին հետ առած մտնել Կիլիկիա, լսեց որ թշնամիք մտել են Եգիպտոս, ուստի աւարներով և գերեալ կաթուղիկոսին հետն առած՝ վերադարձաւ Եգիպտոս, ուր և տարին չըլրացած մեռաւ. չորս ամեայ իշխանութիւնից յետոյ վախճանեց և Ստեփաննոս կաթուղիկոս վտարանդութեան մէջ, իսկ Ս. Լուսաւորչի աջը Աշրաֆի յաջորդը 1293 թ. յետ դարձրեց Կիլիկիա։

Ստեփաննոս Դ-ին յաջորդեց Գրիգոր Է. Անաւարզեցի կամ Անարզաբացի. սա սկզբից արդէն յայտնի էր որպէս յունասէր ոք, և Հռոմ մականուամբ էր կոչւում։ Որովհետև աւերուած էր Հռոմկլայ, Գրիգոր Է. Անաւարզացի հայրապետական Աթոռը փոխադրեց Սիս, և իւր Հռոմ մականուան համեմատ ջանք էր անում յունական և լատինական հետևողութեամբ ինչ ինչ նորմուծութիւններ անել եկեղեցական ժամակարգութեան և արարողութեան մէջ։ Գրիգոր Է. ասորերէնից և յունարէնից ինչ ինչ

յաւելումներ անելով Յայսմաւուրի մէջ՝ ընթերցուածները ամսաթուի համեմատ է կարգաւորում, իւր համար առանձին տօնացոյց է կազմում՝ բայց չէ վստահանում հրատարակել· ի միջի այլոց գրում է «Մեծացուցէ» շարականներ և կարգադրում է ամենայն օր երգել, մինչ առաջ՝ տէրունական օրերին էին երգում· գրած շարականները թէև ընդունելի չեն լինում, բայց ամենայն օր «Մեծացուցէ» երգելու սովորութիւնը մնում է, այն և ս. տէրունական տօների համար նախնեաց գրածներից։

Գրիգոր Անաւարզեցու կաթուղիկոսանալու լուրը Արևելքը լսելով, մանաւանդ նորա եկեղեցական ժամակարգութեան և արարողութեան մէջ արած օտարոտի փոփոխութիւնները, սաստիկ վրդովուեցին, ուստի և Փոքր-Սիւնիքում ժողով կազմեցին և համառօտելով ընդդէմ Քաղկեդոնի ժողովի եղած ժողովոց որոշումները և Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետութիւնը՝ ուղարկեցին կաթուղիկոսին, առաջարկելով հեռու մնալ նորաձևութիւններից, ժողովի վերջնական որոշումը յայտնուած էր ըստ այսմ· «Հաւան ենք մեր հայրերի հետ դժոխք իջնել, և ոչ հռոմների հետ երկինքը բարձրանալ»։ Սիւնիքում եղած ժողովին մասնակցեցին և որոշման ստորագրեցին Սիւնեաց արքեպիսկոպոս Ստեփաննոս Օրբելեան, Բջնոյ աթոռակալը, Հաղբատայ եպիսկոպոսը, Հաւուց — Թառայ և Գողթնեաց եպիսկոպոսները ու ուրիշ նշանաւոր հոգևորականներ· Տարսայիճի և Իւանէի որդիքը՝ Ելիկում և Լիպարիտ իշխանները, Պռօշ իշխանի Պապաք և Խաչի որդիքը ազատօք համդերձ *)։

Գրիգոր Անաւարզեցին յայտնի դիմադրութիւն տեսնելով ազգի կողմից իւր մտադրութեանց՝ նախ քան գործադրել առաջարկելը, համառօտելով իւր կատարելիք փոփոխութիւնները, առաջարկումէ Արևելեայց՝ նոցա հաւանութիւնը նախապէս ստանալու, բայց Արևելեայք որոշումն եկեղեցւոյ հին արարողութեան մէջ չընդունել ոչ մի փոփոխութիւն։ Գրիգոր Անաւարզեցին յամառած իւր օտարամոլութեան մէջ՝ ապաւինում է Հեթում թագաւորահօրը· և իւր մտադրութեան համեմատ դաւանութեան թուղթ գրելով և յանձնելով Լևոն Դ. թագաւորին՝ խնդրում է ժողով գումարել

(*) Ստեփ. Օրբէլ. Հատ. Բ. տպ. ի Փարիզ. 1859 Թ. եր. 197—210.

և ժողովի որոշմամբ ընդունելի հրատարակել. բայց իւր այս միադրութեան կատարումն առանց տեսնելու՝ 1306 թուին վախճանումէ։

Լևոն Դ. թագաւոր 1307 թուին Սսոյ Ե. ժողովըն գումարեց ոչ միայն նոր հայրապետի ընտրութեան, այլ և Անաւարզեցու պաւանութեան թուղթը ընդունելի որոշելու համար։ Ժողովը Լևոն թագաւորի և Հեթում թագաւորահօր ճնշման տակ նորից ընտրումէ Կոստանդին Բ. Պրօնագործին և հաւանութիւն է տալիս Անաւարզեցու կամեցած ծիսափոխութեանը *), որ նոյն ինքն ժողովականները, սակաւ բացառութեամբ, իրանց վճռականները գնալուց յետոյ մերժելով մերժումեն։ Իսկ իշխաններից ոմանք տեսնելով որ Լևոն թագաւոր, և Հեթում թագաւորահայր ջատագով են Անաւարզեցու միադրեալ նորաձևութեանց, թաթարաց Պիլարղու խանի ձեռքով սպանումեն նոցա։ Օշին յաջորդելով Լևոնին հրաւիրեց եպիսկոպոսներին ու վարդապետներին նորից Սսում ժողով գումարել նորաձևութեան խնդիրը քննելու, ընդունելու և գործադրելու համար. հրաւիրեալները հրաժարուեցին կատարել թագաւորի հրաւէրը, այլ ժողովելով Սիս, ոչնչացրին Սսոյ Ե. ժողովի կամ Անաւարզեցու նորաձևութեանց խնդիրը. ժողովականներին միացան ազգի բոլոր դասակարգերը մինչև անգամ կանայք, և սկսեցին աղմուկ յարուցանել. Օշին զայրացած հառակորդներից գլխաւորներին բանտարկում, աքսորում, և

(*) Ա. Քրիստոսի մէջ երկու բնութիւն խոստովանել.

Բ. Սուրբ «Աստուած»ի մէջ աւելացնել Քրիստոս բառը, ըստ այսմ. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ Քրիստոս, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»։

Գ. Ծննդեան տօնը Յունաց և Լատինաց պէս տօնել Դեկտեմբերի 25 ին նոյնպէս և միւս տօները՝ Յայսմաւուրի դասաւորութեան համեմատ։

Դ. Հինգ օր Քրիստոսի ծննդեան և հինգ օր Աստուածայայտնութեան համար պահել.

Ե. Ծննդեան և Յարութեան ճրագալոյցներին միայն ձկով և ձիթով լուծանել.

Զ. Ս. Պատարագին՝ իւրաքանչիւր աստիճանի համեմատ զգեստաւորուել.

Է. Խորհրդոյ սեղանի վերայ գործուրա կամ մարմնակալ դնել.

Ը. Բաժակի հետ ջուր խառնել։

Թ. Եօթն տիեզերական ժողովները և նոցա սահմանադրութիւնները ընդունել. (Ժող. պատմ. Աբ. Արքեպիսկոպոսի Գլ. ԽԲ. եր. 133—134)։

մինչև անգամ սպանումէ, և նորաձևութեան խնդիրը յառաջ տանելու համար կամենումէ Ատանայում ժողով գումարել, բայց թշնամիների աւերածութիւններից ստիպեալ՝ հրաժարվումէ այս մտադրութիւնից, և թշնամիներին դիմադրելու համար փոխանակ ազգի ձեռնտուութեան ապաւինելու, Կապանի Յակոբ եպիսկոպոսին ուղարկումէ պապի մօտ օգնութիւն խնդրելու. պապը օգնութեան փոխարէն՝ մի թուղթ է ուղարկում յորդորելով լատինանալ և լատինացնել հայ ազգը:

Օշինին յաջորդումէ իւր որդին Լևոն Ե. սորա օրով Եգիպտոսի Սուլթանը նկատելով որ Հայք յարաբերութիւն ունին պապի և եւրոպացւոց հետ, և Օշնի մահուամբ երկիրը շփոթութեան մէջ է, զօրքեր է ուղարկում Կիլիկիա ասպատակելու: Լևոն դիմումէ պապի օգնութեանը, պապը նոր խաչակրաց արշաւանք է յորդորում կազմել, բայց չի յաջողում, և հենց այս ժամանակները 1323 թուին վախճանումէ Կոստանդին Բ. Պրօնագործ, և կաթուղիկոս է ընտրվում Կոստանդին Գ. Լամբրօնացի, որ անձամբ դիմելով Եգիպտոսի սուլթանին, խաղաղութեան դաշն է կապում, որով աշխարհը փոքր ինչ անդորրանում է:

ՍՍՈՅ Բ. ԺՈՂՈՎ *) (1243 Թ.)

Գահերեցութեամբ Կոստանդնի Ա. Բարձրաբերդցւոյ:

Ա. Ձեռնադրութիւնները առանց դրամի լինին:
Բ. Վկայեալները միայն եպիսկոպոս ընտրուեն:
Գ. Եպիսկոպոս ձեռնադրուողները գոնէ 30 տարեկան լինին, ամուսնացեալ քահանայքը՝ 25, իսկ սարկաւագները՝ 20:
Դ. Միայն արժանաւորները քահանայ և սարկաւագ ձեռնադրուեն:
Ե. Բացի մահուան վտանգից, քահանաները եկեղեցու խորհուրդները ծոմ կատարեն
Զ. Եկեղեցու խորհուրդները պատկառանօք կատարուեն:
Է. Մկրտութեան աւազանը եկեղեցում հաստատուն լինի:
Ը. Մերձաւոր ազգականների մէջ մինչև եօթն ծնունդ պսակ չըլինի:
Թ. Եպիսկոպոսները կամ երէցները չըհամարձակեն ուրիշների թեմում առանց հրամանի պաշտօն կատարել:
Ժ. Ամենայն տեղեր ուսուցիչներ կարգուեն:
ԺԱ. Ս. Գիրքը միայն գիտուններն ու ուղղափառները գրեն:

(*) Ժող. Պատմ. գլ. ԼԸ. եր. 122—125:

ԺԲ. Եպիսկոպոսները տարին երկու անգամ՝ իրանց վիճակը այցելութեան շրջեն։

ԺԳ. Խոստովանահայրերը ծեր և գիտուն լինին, և ամենայն կիւրակէի յորդորեն ժողովրդին խոստովանելու։

ԺԴ. Ս. հաղորդութիւնը առանց բուրվառի և մոմեղէնի չըտարուի հիւանդների մօտ։

ԺԵ. Պոռնիկներն ու հմայողները պատժուեն։

ԺԶ. Հայհոյիչները աշխարհական պատժով պատժուեն։

ԺԷ. Պահքը առանց ձկան և ձէթի պահուի, բացի հիւանդութեան հարկից։

ԺԸ. Քահանաները, եթէ որսորդութեան կամ վաճառականութեան պարապին՝ զրկուին իրանց ժողովրդից։

ԺԹ. Ժողովուրդները իրանց ծխատէր ընտրեն միայն եպիսկոպոսի թոյլտուութեամբ։

Ի. Քահանաները առանձին խնամքով քննեն տարին մի անգամ իրանց ժողովուրդը ի՛նչ բանում է զարգանում և ի՛նչ բանում նուազում։

ԻԱ. Ժողովրդականք քահանաներին հասոյթ տան։

ԻԲ. Քահանաները եպիսկոպոսների պիտոյքը հոգան։

ԻԳ. Նոյնպէս և եպիսկոպոսները հայրապետական աթոռի պիտոյքը հոգան։

ԻԴ. Առաւօտեան և երեկոյեան «Գոհանամք զքէն» և «Լոյս ձայնից» աղօթքները, որոնցից յետոյ «Սուրբ Աստուած»ն ենք երգում՝ վերջանան ի դէմս Որդւոյ՝ յարելով. «Քրիստոս Աստուած մեր» բառերը՝ որ յայտնի լինի թէ ի դէմս Քրիստոսի է ասվում «խաչեցար»ը։

ԻԵ. Հիւանդների վերջին օծման խորհուրդը կատարուի քահանայից օրհնուած իւղով, ինչպէս որ վաղ ժամանակից սահմանել է Եղիայի յաջորդ Յովհաննէս Իմաստասէր մեծ հայրապետը *)։

ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎ Ի ՍԻՍՆԻՍ. 1294 **)։

Նախագահութեամբ Ստեփաննոսի Օրբելեան.
(Համառօտութիւն թղթոյ առ Գրիգոր Է. Անաւարզեցի)

Ա. Ընդունել երեք Տիեզերական ժողովները և նոցա սահմանադրութեան հետևող լինել։

Բ. Ընդունել Հայոց ազգային այն ժողովները, որո՛նք ընդդէմ էին Քաղկեդօնի ժողովին ***)։

(*) Վերջին օծման խորհուրդը Հայաստանեայց Ս. եկեղեցին կատարումէ միայն աղօթքով։

(**) Օրբ. Բ. հատ. տպ. ի Փարիզ եր. 197։

(***) Ցիշատակուած են բոլոր ժողովները յանուանէ, ընդ որս եւ Ս̃նւոյ ժողովը՝ որով Վահան կաթուղիկոս համարելով `Վրաց համախոհ՝ դահընկէց եղաւ, որով-

Գ. Հեռի մնալ քաղկեդոնականներից։

Դ. Ս. Հաղորդութիւնը անապակ գինով և անխմոր բաղարջ հացով կատարել։ Անապակ բաժակը ընդունել ի խորհուրդ կողահոս արեան, իսկ մկրտութեան լուացումը՝ ի խորհուրդ կողահոս ջրոյ։

Ե. Ս. Պատարագը ահիւ և զգուշութեամբ մատուցանել։ Պատարագիչը միշտ լինի։ Եկեղեցին մարմնաւոր սեղանի տեղ չըդարձնել, այլ զգուշանալ՝ որ սուրբ կամ անսուրբ կենդանիք չըմտնեն եկեղեցի։

Զ. Ցունաց եկեղեցի չըմտնել, և տէրունական տօները նոցա հետ չըտօնել, և ճրագալոյծներին՝ բաց ի մսից ամենայն բան ուտել։

Է. Հիւանդաց վերջին օծումն իւղով չըկատարել, որ այդ օծման վերայ վստահացած՝ մարդիկ մեղքի մէջ անզգայ չըմնան։

ԳԼ. ԺԶ.

Կոստանդին Գ. կաթուղիկոսի ժամանակով քարոզողաց կարգից Բարդուղիմէոս լատին եպիսկոպոսը Ատրպատականում մեծ հռչակ էր ստացել, և բաւական հետևողներ ունէր։ Նչեցի Եսայի վարդապետը իւր աշակերտներից Ցովհան Քռնեցուն ուղարկեց նորա մօտ՝ որ ստուգէ նորա ուղղափառ լինելը և քարոզութեան որպիսի ուղղութիւն ունենալը։ Քռնեցին Մարաղայում հանդիպեց Բարդուղիմէոսին և նորա բարեմասնութեան մասին Նչեցուն ծանու-

---

հետեւ նա Հայոց եկեղեցիներում պատկեր նկրմուծեց, որով խաչի պաշտաւութիւնը վերցուած էր եւ սեղանները իկոնաներով էին զարդարուած (Ստեփ. Օրբ. հատ. Բ. եր. 202—203)։

Իկոնա նշանակումէ պատկեր։ Հնումն թերեւս թիթեղի կամ տախտակի վերայ նկարուածներին էին կոչում իկոնա, որի կիրառութիւնը անսովոր էր, թէեւ այժմ շատ յաճախեալ։ Հայաստանեայցս Ս. Եկեղեցւ մէջ պատկերի կիրառութիւնը շատ հնուց է։ Աբգար նախահաւատ թագաւորը ստանալով Քրիստոսի պատկերը կամ Դաստառակը՝ հաստատեց Եդեսիայի պարսպի կամարի վերայ։ Ըստ աւանդութեան՝ Բարդուղիմէոս առաքեալը Աստուածամօր պատկերը բերեց Հայաստան։ Արդարեւ, պատկերի կիրառութիւնը Հայերիս համար նոր չէր, մանաւանդ տէրունական պատկերի։ Եկեղեցւոյ երախտաւոր հարց եւ անձանց, մանաւանդ հայրապետների պատկերները նկարումէին եկեղեցւ որմերի վերայ, ինչպէս ութերորդ դարում վկայումէ Սողոմոն Գառնեցի ասելովն «Երթամ զի դեղապաճոյճ դեղով նկարողաց սեւել զիս ընդ այլ հայրապետսն տամ յորմ եկեղեցւոյ». (Ցովհ. կաթուղիկոս)։ Յետոյ երբ հայրապետների թիւը շատ բազմացաւ, եւ այս թուի մէջ եղան այնպիսիները՝ որոնք իրանց կոչման համապատասխան արդիւնք ցոյց չըտուին՝ որոշուեց միայն կարի երախտաւորների եւ եկեղեցւոյ սուրբ համարուածների պատկերները նկարել, իսկ Ս. խաչը, որով մարդկանս փրկութիւնը կատարուեց՝ կարի կիրառութեան մէջ էր։ Սուրբ խաչը կանգնացնումէին նաեւ եկեղեցւց դուրս հարկաւոր տեղերը յարեւշատութիւն կենդանեաց կամ վասն յիշատակի ննջեցելոց ի բարեխօսութիւն։

*ցանելուց յետոյ՝ մնաց նորա մօտ մի և կէս տարի, և որչափ կա-
րելի էր սովորելով նորանից լատին լեզուն՝ ում քաջ լատինագէտ
Յակովբ վարդապետի գործակցութեամբ լատիներէնից Հայերէն
ինչ ինչ թարգմանութիւններ արեց։ Յովհան Քռնեցին Բարթուղի-
մէոսի հետ Քռնա եկաւ և իւր աշակերտակիցներին հրաւիրեց
Քռնա՝ հաւատի մասին խորհելու. խորհրդի հետևանքն այն
եղաւ, որ ոմանք Քռնեցու հետ թողնելով հայկական եկեղեցին՝
պապականութեան քարոզիչ դարձան և լատին եկեղեցու ժա-
մանակարգութիւնը Հայերէն թարգմանելով՝ սկսեցին ըստ այնմ
վարել։*

1327 *թուին չորսամեայ իշխանութիւնից յետոյ վախճանեց
Կոստանդին Գ. կաթուղիկոս, և Գրիգոր Անաւարզեցու քեռորդի
Յակովբ Բ. Սսեցին յաջորդեց այն ժամանակ՝ երբ Քռնեցին իւրա-
յիններով առաւել քան լատինները լատինացած՝ եկամուտ անելու
ամեն ջանք և եռանդ գործ էր դնում։ Ոչինչ ազդեցին Նչեցու
յանդիմանութիւնները, որովհետև Քռնեցին իւր վարժապետից
պատկառելու փոխանակ, Բարթուղիմէոսի մահից յետոյ, աւելի ևս
բազմապատկեց իւր եռանդը ի կործանումն ժողովրդի բարոյական
շինութեան։ Լևոն Ե. թագաւորը Քռնեցեանց եռանդը չափաւո-
րելու համար սկսեց բռնութիւն գործ դնել կալանաւորելով ոմանց.
բայց այս բանը աւելի ևս առիթ տուեց Քռնեցեանց յամառելու,
որոնք Լևոնին, հակառակ պապի կարծեաց, պապականութեան
խափանիչ ներկայացնելով՝ պապի պաշտպանութեան արժանա-
ցան, և մի և նոյն ժամանակ պատճառ եղան՝ որ պապը գլացա-
ւալ Լևոնին այն նպաստը, որ Կիլիկիայի իւր դեսպանի ձեռքով
պէտք է յանձնէր Լևոնին եկեղեցեաց և վանօրէից շինութեան
համար. բաց յայսմանէ, պապը գրեց Յակովբ կաթուղիկոսին
պաշտպանութիւն ցոյց տալ Քռնեցեանց. և Յակովբ կաթուղի-
կոս, եկեղեցու խաղաղութիւնը և ժողովրդի անդորրութիւնը ի
նկատի ունենալով՝ ընդհանրական թղթերով յորդորում է Հա-
յերին չը հալածել Քռնեցեանց, և մի և նոյն ժամանակ գրում է
Քռնեցուն, որ նա ևս հայ ժողովրդի, առանց այն ևս տառա-
պալից դրութիւնը աւելի ևս չըդառնացնի կրօնական երկպառա-
կութիւն սերմանելով, սակայն ոչ Քռնեցին իւր եռանդը չափաւո-
րեց և ոչ ժողովուրդը իւր ատելութիւն։ Քռնեցին հալածուած
հայ եկեղեցականներից և ժողովրդից՝ գնաց պապի մօտ և* 1333

թուլին հրաման ստանալով՝ Հայաստանում հաստատեց Դոմինիկեան Ունիթոռաց (միաբարաց) կարգը, որի գործունէութեան ասպարէզ դարձան Նախիջևանի, Երնջակու և Մարաղայու գաւառները, Թիֆլիս և Սուլթանիէ քաղաքները և Խրիմում՝ Թէոդոսիա քաղաքը, որ գէնուացւոց իշխանութեան տակն էր։

Հայք այս կրօնական խառնաշփոթ ժամանակին երեք մասն էին բաժանվում. ա. Հայրենի եկեղեցւոյ նախանձախնդիրներ, որոնք Ունիթոռներից [illegible] (հերձեալ, հերետիկոս) էին կոչվում՝ բ. Սսոյ Ե. ժողով ընդունողներ՝ որոնք Սսոյ ժողովականք էին կոչվում. և գ. պապականութիւն ընդունողներ՝ որոնք Ունիթոռներ էին կոչվում։

Ունիթոռնութեան գլխաւոր արբանեակներ դարձան Որմիոյ եպիսկոպոս Ներսէս Պալիենց և Կարնոյ եպիսկոպոս Սիմէոն բէկ, որոնք Հայ եկեղեցու սուրբ խորհուրդները երկբայելի էին քարոզում, և նրանք նորից մկրտուելուց ու ձեռնադրուելուց յետոյ, նրանց հետևորդներին եթէ աշխարհական էին՝ նորից մկրտում էին, իսկ եթէ հոգևորական՝ մկրտում ու ձեռնադրում. և որովհետև սուրբ խորհրդի այս օրինակ կրկնուելը մեծ զարոյթ էր պատճառում, ուստի և բաղանիքներում և այլ ծածուկ տեղերում էին կատարում սուրբ խորհրդոց այս կրկնութիւնները։

Լևոն Ե. թագաւոր և Յակոբ Բ. կաթուղիկոս Ունիթոռների այս գայթակղական վարմունքը լսելով՝ սկսեցին հալածել նոցա։ Թէև Ներսէս և Սիմէոն եպիսկոպոսները տարուելով կաթուղիկոսի մօտ՝ կարգալոյծ եղան և բանտարկուեցին, բայց զղջումն կեղծելով՝ ազատուեցին, և Ներսէս, Կանչոյ բերդում եղած ժամանակը զրպարտութեամբ խռովութեան տեղի տալուց յետոյ, մազապուրծ հազիւ կարողացաւ փախչել ազատուել՝ նորից թակարդներ լարելու ժողովրդի անդորրութիւնը վրդովելու համար։ Յակոբ կաթուղիկոս պարտաւորուեց թղթով խնդրել պապից որ զսպէ Ունիթոռներին, սակայն նոքա իրանց արդարացրին՝ ամբաստանելով Հայ թագաւորին և կաթուղիկոսին և այսպէս ապահովեցին իրանց գլուխը։

Կրօնական այս խռովութիւնները արդէն բաւական թշուառացրել էին Հայ ժողովրդին և ահա Եգիպտոսի ամիրան Հայ արքունեաց յարաբերութիւնը պապերի հետ վտանգաւոր համարելով իր իշխանութեան՝ մաս Կիլիկիա քրիստոնէութիւնը սպառ

սպուռ ջնջել սպառնալով, բայց Լեւոն Ե. Թագաւոր երդմամբ խոստանալով ընդհատել պապերի հետ յարաբերութիւնը, իջեցրեց ամիրայի բարկութիւնը: Հայք չըկարողացան երկար հանգստութիւն վայելել, վասն զի Լեւոն հակառակ իւր երդման, որ կոնդակով լուծել էր պապը, նորից սկսեց յարաբերութիւն և Եգիպտոսի ամիրան առիթ բռնելով Լեւոնի դրժելը իւր երդմանը, բազմաթիւ զօրքով աւերակ դարձրեց երկիրը և 16 բերդեր կործանեց: Հայ իշխաններից ոմանք անհրաժեշտ էին համարում պապերի և եւրոպացւոց հետ յարաբերութիւնը, որ հերետիկոս չըհամարուէին, բայց ոմանք ևս դժկամակ էին. և Լեւոն, իւր երդմանը դրժելով երկրի աւերման պատճառ լինելուն համար չըկարողանալով տանել Յակովբ կաթուղիկոսի յանդիմանութեանցը, գահընկէց արեց նորան և տեղը հաստատեց Մխիթար Քռնեցուն: Ներսէս Պալիենց պաշտպանութիւն գտնելու յուսով երբ դիմեց Մխիթարին և մերժուեց նորանից՝ զայրացած՝ Ունիթոռների դրդմամբ Հայ եկեղեցու դէմ 117 յօդուած զրպարտութեամբք յերիւրեալ մի գրքոյկ ձեռին գնաց պապի մօտ և ներկայացրեց նորան: Պապը յատուկ գրութեամբ այս զրպարտութեամբ լի գրքոյկը ուղարկեց Թագաւորին և կաթուղիկոսին, ի քննութիւն. կաթուղիկոսը հրաւիրեց եպիսկոպոսներ և վարդապետներ և նոցա խորհրդով զրպարտութեանց հերքումն պատրաստելով ուղարկեց պապին մի գրութեամբ՝ որի մէջ Լեւոնին յաջորդող ի հօրէ լատինամիտ Կոստանդին Թագաւորի ճնշմամբ մի քանի շողոքորդիչ բառեր կային *):

Թէ Կոստանդին Թագաւոր, և թէ նորա եղբայրն ու յաջորդն Գուիտոն, որ ստիպումէին Հայերին լատինական ծէսով վարուել՝ սպանվումեն Հայ զօրականներից, նոցա յաջորդն Կոստանդին Գ. շարունակումէ պապի և արևմտեաց հետ բարեկամական յարաբերութիւնը, որ առիթ է տալիս Եգիպտոսի սուլթանին Կիլիկիա մտնելու՝ քրիստոնէութիւնը ջնջելու համար. Կոստանդին օգնութիւն է խնդրում պապից և պապական պետութիւններից խոստանալով պապական իշխանութեան ենթարկել Հայ եկեղեցին և լատինական ծէսերն ու արարողութիւնները ներմուծել

(*) Պապականք այս շողոքորդիչ բառերից առած՝ պնդումեն թէ Մխիթար ընդունել է պապական գերիշխանութիւնը:

Հայ եկեղեցու մէջ. պապը փոխանակ օգնելու, նուիրակներ է ուղարկում Կիլիկիա՝ Հայոց դաւանութիւնը քննելու համար. այս նուիրակները այն աստիճան յանդգնաբար սկսում են միջամտել եկեղեցական գործերին՝ որ Մխիթար կաթուղիկոս ստիպւում է առաջարկել պապին՝ որ նա իր նուիրակներին արգելէ Հայրապետական գործերին միջամտել և խանգարում պատճառել։ Պապը այս գանգատը քննելու համար իր մօտ է կանչում աղգուրայ Ներսէս Պալիենցին, արևելքին ծանօթ անձինքներին և Ունիթոռներին, որոնք Մխիթար կաթուղիկոսի գանգատանքը զրպարտութիւն և Հայ եկեղեցին հերետիկոս են ներկայացնում, և Պապը նոցանից թելադրուած՝ թղթով առաջարկում է կաթուղիկոսին և Կոստանդին թագաւորին որ գրով և երդմամբ հաստատեն պապական իշխանութեան և լատին եկեղեցու կարգադրութեանց։

Ներսէս Պալիենց, որ Մանազկերտի արքեպիսկոպոսի անունով արևելք էր գալիս՝ Պապի յանձնարարականով մտաւ Կիլիկիա, Հայ արքունեաց և Հայրապետանոցի պատասխանը լատիներէն լեզուով պապին հաղորդելու համար. բայց նա իր չարանենգ բնաւորութեամբ, որպէս թէ կաթուղիկոսի կողմից, իր կամեցածին պէս մի գրութիւն յերիւրելով աւելի ևս բանսարկութեան և չարախօսութեան պատճառ դարձաւ, մինչև որ երբեմն կաթուղիկոս Յակոբ Բ. Սսեցին գնացած լինելով Դաղչիա, պապի հետ դէմ առ դէմ խօսելով՝ շահում է նորա գայթագղած միտքը։ Մխիթարի մահից յետոյ 1355 թուին սոյն այս Յակոբ նորից ընտրւում է կաթուղիկոս և չորս ամեայ իշխանութիւնից յետոյ վախճանում է, որին 1359 թուին յաջորդում է Թադէի վանքի վանահայր Մեսրոպ Արտազեցին. Մեսրոպ Արտազեցի տեսնելով որ ինչ ինչ օտարոտի նորաձևութիւններ ներմուծուած են եկեղեցու մէջ, և օտարամոլներից ոմանք ջրախառն բաժակով են պատարագում՝ 1361 թուին Սսոյ Զ. ժողովը գումարեց, ուր և որոշուեց ըստ նախնեաց անապակ գինով պատարագել, որով և հանդարտուեց խռովութիւնը որ այլում էր եկեղեցւոյ խաղաղութիւնը։

Մեսրոպի հայրապետութեան չորրորդ տարին 1362 թուին մեռաւ Կոստանդին թագաւորը. Հայք նկատելով որ Լուսինեան կաթոլիկ այս իշխանների հետ խնամութիւնից առաջ եկած թագաւորները անհաւատարմութեամբ էին վարւում՝ դէպի ազգն ու

եկեղեցին հակամիտութիւն ունենալով դէպի եւրոպացիք և դէպի պապերը, չէին կամենում նոցանից թագաւոր կարգել, չէին էլ կարողանում համաձայնութիւն կայացնել իրանցից մէկին թագաւոր կարգելու, ուստի երկու տարի անիշխանութեան մէջ մնաց երկիրը, հուսկ ուրեմն մեծամեծ շփոթութիւններից յետոյ 1365 թուին ձեռնտուութեամբ լատինաց՝ թագաւորեց Լևոն Զ. Լուսինեան:

Լևոն Զ. իւր համակրութեամբը դէպի եւրոպացիք նշաւակ է լինում Եգիպտոսի և Բաղդատի մահմետական սուլթանների յարձակմունքներին. այս դառն ժամանակին հայրապետանոցի դրութիւնն ևս յետին թշուառութեան էր մատնուած: Մեսրոպ կաթուղիկոս մի ելք գտնելու համար Սսոյ Յովհաննէս արքեպիսկոպոսին պապի մօտ է ուղարկում օգնութիւն խնդրելու, բայց այս յուսով ևս 1372 թուին վախճանւում է և յաջորդում են հետզհետէ Կոստանդին Դ. Պօղոս Ա. և Թէոդորոս Բ. որոնք երկրի աւերածութեան պատճառաւ հանգիստ չկարողանալով գտնել՝ մի նշանաւոր գործ էլ չեն կարողանում կատարել: Լևոն Զ. Պապից և պապականներից ակնկալեալ օգնութիւնը չկարողանալով ստանալ, և լատինամոլութեամբ ազգի համարումն ևս կորցրած լինելով Եգիպտոս գերի է տարւում և վերջապէս օգնութեան յուսով, տարագրութեան մէջ 1393 թուին վախճանելով Փարիզում՝ թաղւում է Կեղեստինեանց վանքում իւր հետ թաղելով և Ռուբինեան հարստութիւնը: Թէոդորոս կաթուղիկոս ևս Մելիք-Օմար բռնաւորից կալանաւորուելով 18 ամսայ իշխանութիւնից յետոյ, 1395 թուին սպանւում է:

Ռուբինեան հարստութեան անկումից յետոյ Հայաստանի վիճակը կարի ողորմելի թշուառութեան էր մատնուած. Հայաստանեայցս եկեղեցին մատնուած էր Ունիթոռների յուզկահարութեան, իսկ ժողովուրդը՝ Լանկթամուրի վայրագ սրածութեան, որին բազմաթիւ հաւատոյ նահատակաց հետ զոհ գնաց և Աղթամարայ Զաքարիա կաթուղիկոսը:

Եկեղեցին իւր հակառակորդների դէմ մաքառումէր քաջ ախոյեանի ձեռքով, որոնք էին Նչեցի Եսայի վարդապետի աշակերտ Իւանէ իշխանի որդի Յովհան Որոտնեցին, և սորա աշակերտներն Մաղաքիա վարդապետ, որ Ունիթոռներից թունաւորուելով վախճանեց, և Գրիգոր Տաթևացի: Մաղաքիա վարդապետ իշխանե-

րի ձեռքով պատուհասումէր Ունիթոռներին մարմնաւոր պատիժներով, իսկ Գրիգոր Տաթևացին սկզբում Ապրակունիսի վանքում և յետոյ իր ուսուցիչ Յովհան Որոտնեցու մահից յետոյ Տաթևու վարդապետանոցում ուսուցիչ կարգուելով՝ բանիւ և գրով ըմբերանումէր Ունիթոռներին:

Թէոդորոս Բ-ին 1396—1409 հետզհետէ յաջորդումեն Կարապետ Ա. Բոքիկ մականուանեալ, Դաւիթ Գ. Կարապետ Բ. և, Կիլիկիոյ այլազգի իշխանի հաճութեամբ ու իր համախոհների ձեռնտուութեամբ՝ Յակովբ Գ. որ 1410 թուին դեղակուր սպանուեց: Սորա օրով Անթիամարու կաթուղիկոսութեան թեմը թշնամացած իր կաթուղիկոսի դէմ, խորհրդով Տաթևու Գրիգոր վարժապետի, որ իր աշակերտների հետ Արճիշոյ Մեծոփայ վանքումն էր գտնվում, գահընկէց արեց իր կաթուղիկոսին և միացաւ Սսոյ հետ. բայց այս միաբանութիւնը երկար չըտևեց, վասն զի Վասպուրականցիք նորից իրանց կաթուղիկոսին հաստատեցին իր աթոռի վերայ: Մեծամեծ շփոթութիւններից յետոյ 1411 թուին Յակովբ Գ-ին յաջորդեց Գրիգոր Ը. Խանձողատ կոչեցեալ, որ զգալով թէ իր դէմ դաւաճանութիւն է նիւթվում, Կիլիկիայի այլազգի իշխանների ձեռքով թէև պատուհասակոծ արեց դաւաճաններին, բայց և ինքն աքսորուեց մի բերդ, և եօթնամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ վախճանեց բանտում 1418 թուին:

Գրիգոր Ը. Խանձողատի մահից յետոյ Երուսաղէմի առաջնորդ Պօղոս Արարատեցին հրաւիրուած լինելով Սիս, տեղւոյն շփոթ գործերը կարգադրելու և հայրապետանոցի միաբաններին միմեանց հետ հաշտեցնելու, 1418 թուին ընտրուեց կաթուղիկոս Պօղոս Բ. անուամբ: Սա 12 տարի ժողովրդի անդորրութեան և եկեղեցու պայծառութեան համար հոգալով հայրապետական իշխանութիւն վարելուց յետոյ վախճանեց 1430 թուին, և յաջորդեց Կոստանդին Ե. Վահկացին, որ Հռոմայ Եւգինէոս Դ. պապից հրաւիրվումէ Ֆերարայում գումարուելիք ժողովին, բայց Կոստանդին առանց Արևելեայց չըվստահանալով պատասխանել պապի հրաւէրին, հրաւէրի թուղթը ուղարկումէ Տիգրանակերտի հաշակեալ Մկրտիչ Նաղաշ կոչուած եպիսկոպոսին: Նաղաշ բացատրելով պապի միտքը, և համառօտելով Քաղկեդոնի ժողովի դէպքերը, գրումէ որ Հայք բացի տիեզերական նախկին երեք ժողովներից ոչ մի ժողով հարկ չունին ընդունելու:

Կոստանդին Ե. երբ պատրաստւումէր Նորաշէն այս Թուղթը ուղարկել պապին, ստանում է Խրիմու առաջնորդ Սարգիս վարդապետի Թուղթը, որ ստիպեալ տեղւոյն պապական Հիւպատոսից՝ յորդորում է կաթուղիկոսին ընդունել պապի հրաւէրը: Կոստանդին կաթուղիկոս նոյն ինքն Սարգիս վարդապետին իւր կողմից պատուիրակ կարգելով ուղարկում է Իտալիա, որ մինչև տեղ կըհասնէր, ժողով Ֆլորենցիա փոխադրուելով՝ այն տեղ ևս վերջանում է. ժողովի որոշումները, որ վճռելի էին Յունաց և Լատինաց մէջ՝ Հայք չընդունեցին բնաւ, որովհետև ժողովը տրամադրում էր ի միջի այլոց Սուրբ Հոգին Հօրից և Որդուց բղխեալ դաւանել՝ ընդունել քաւարանը, պապի գլխաւորութիւնը ևլն: Հայ պատուիրակի վերադարձից մի տարի առաջ 1439 Թուին վախճանեց Կոստանդին Ե. և յաջորդեց Յովսէփ Գ. Սսեցի, որ մի քանի ամսից յետոյ վախճանեց:

Կիլիկիոյ վերջին կաթուղիկոսները իրանց ստորամտութեան ու իրանց կողմից անվայել գործերով մեծամեծ խռովութեանց պատճառ էին դարձել և կորցրել էին այն համարումը, որ պիտի ունենար Հայ Հայրապետը ազգի մէջ. Գրիգոր Թ. Մուսաբէկեան առանց ազգի հաճութեան կաթուղիկոսանալով և ապօրինաբար հինգ եպիսկոպոսներ ձեռնադրելով խռովութիւնն աւելի ևս սաստկացնում է: Հայք նկատելով որ Կիլիկիոյ Հայրապետանոցը յետին անարգութեան է հասել, նկատելով որ Ռուբինեան հարստութեան անկմամբ Կիլիկիան չէր այլ ևս կենդրոն, այլ գաղթատեղի Հայոց՝ ստիպում են Գրիգոր Մուսաբէկեանին գալ Ս. Էջմիածին և այն տեղ վարել Հայրապետական իշխանութիւնը: Մուսաբէկեանց չի ընդունում ազգի հրաւէրը, ուստի և ազգը 1441 Թուին Վաղարշապատու Ջ-որդ ժողովը կազմելով, ուր Ներկայ էին 700-ից աւելի անձինք, Թող հաւանութեան Թուղթը նոցա՝ որոնք չը կարողացան ներկայ գտնուիլ՝ Հայրապետական Աթոռը փոխադրեց Վաղարշապատ, և Կիրակոս Վիրապեցուն ընտրեց կաթուղիկոս, Հակաթոռ հրատարակելով Սիսը:

(Շարունակելի) Յ. Վ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

(ԸՍՏ Գ. ՀԱՐՄՍԻ).

(Շարունակ. Արարատ, Բ. Լ.).

III

ՆՈՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ.

1. Նոր հոգեբանութեան գրաւականները. Նոր հոգեբանների յաջորդներից հարկաւոր է մի քանի անձանց մասին յիշել, որոնք միջնադարեան սխօլաստիկան թողնելով՝ հակւումէին մասամբ դէպի սկեպտիկական և մասամբ մատերիալիստիկական հայեացքները, մասամբ էլ սոցա (այս հայեցքների) նման գրուածքներ էին յայտնում, որոնք յետոյ աւելի կապակից համակարգութեամբ Դեկարտից և Լէյբնեցից մշակուեցան։

Պոմպոնատիոս (✝ 1525) հոգեբանութեան մէջ սկեպտիկական ուղղութեան ներկայացուցիչն է երևում։ Նա հոգւոյ անմահութիւնը կասկածանքի է ենթարկում, որովհետև հոգին պահանջումէ մարմին, ինչպէս իւր գիտակցութեան և գործողութեան առարկայ. ուրեմն՝ նորան անհասկանալի է հոգւոյ գոյութիւնն առանց մարմնոյ։ Մարդս իւր նշանակութիւնն իրագործելու համար անմահութեան կարօտութիւն չունի. նշանակած լինելով ոչ թէ տեսականութեան, այլ գործնականութեան համար, նա այս կեանքումն իւր պարտքը կատարելու կարելիութիւնն ունի։ Այնու ամենայնիւ, Պոմպոնատիոսն անմահութեան ճշմարտութիւնը չէ մերժում, ինչպէս հաւատոյ հաւատալիք, այլ հաստատումէ նորա անապացուցութիւնը մարդկային բանականութեան համար։

Տելեզիայի (1508—1588) և Կամպանելլայի (1568—1639) սանսուալիզմը իւր գլխաւոր կէտերի մէջ Լոքի սանսուալիզմի հետ համաձայն է։ Այս փիլիսոփաների հայեացքներով ամեն մի գիտակցութիւնն արմատանումէ զգացողութեանց մէջ և նոցա փոխադարձ խմբաւորութեան մէջ։ Հոգին նիւթեղէն է, որովհետև միմիայն մարմինը (նիւթը) կարող է ուրիշ մարմնոյն կպչել և նորա հետ հաղորդակցութիւն ունենալ։ Բայց ո՛չ Տելեզիան և ո՛չ էլ Կամպանելլան իւրեանց հայեացքները հետևողաբար չզարգացրին։ Նոքա երկուսն էլ ընդունումեն հոգւոյ բանական, գերբնական մասին անմահութիւնն և տատանւումեն ծայրահեղ մատերիալիզմի և ծայրահեղ սպերիտուալիզմի մէջ։

Գերմանացի աստուածաբանները (Ագրիպա Նետտես Լէյմացին (1486—1535, Պարացէլսը 1493—1541, Յակոբ բեօմէ 1575—1624 ևլն.)

սկսում էն մարդուն բնութեան հետ՝ փոքր աշխարհը տիեզերքի հետ համեմատել։ Մարդու մէջ նոքա որոշումեն մարմին, ոգի և հոգի։ Ոգին նուրբ նիւթ է, բնութեան մէջ տարածուած և մարդուն կապումէ աշխարհի հետ. հոգին անմահ, աստուածային սկիզբն է։ Որովհետև մարդ փոքր աշխարհ է (միկրոկոսմ), այս պատճառաւ կարող է տիեզերքը (մակրօկոսմ) ճանաչել։ Եթէ մարդուս մէջ աշխարհիս բոլոր տարրներ չլինէին, այն ժամանակ չէր կարող նոցա պատկերացնել և խորհիլ, ընդունիլ և ճանաչել։ Աստուածաբանութիւնն իւր անուսումնականութեամբ և անհամակարգութեամբ հանդերձ յետագայ ուսմունքների վերայ առանց ազդեցութեան չմնաց, ինչպէս և Լէյբնեցի անհատական հիւլէբանութեան վերայ (մօնադօլօգիա)։ Վերջնոյս նախընթացը կարելի է համարել Ջիորդանօ—Բրունօ (1548—1600)։ Բրունօի ուսումով մարդս մի միջնորդ օղակ է աստուածայինի և երկրայինի մէջը, մարդս աշխարհների շաղկապն է, և այս պատճառաւ իւր մէջը միացնումէ կեանքի բոլոր տեսակներն ու ձևերը։ Հոգին կենդանացնումէ ամբողջ մարմինը, ինչպէս որ աշխարհային հոգին կենդանացնումէ ամբողջ բնութիւնը։ Գիտակցութեան զարգացման աստիճաններն են՝ զգայական տպաւորութիւն, երևակայումն, իմացութիւն և աստուածային բանականութիւն (ամենատեսութիւն)։

Ուշադրութեան արժանի է որ այս ժամանակի թէ արիստոտէլականների և թէ պղատօնականների հոգւոյ և նիւթի բնութեան զանազանութեան վերայ ունեցած հայեացքը նոյնն է, ինչ որ յետոյ Դեկարտը կատարելապէս զարգացրեց (մշակեց)։ Հին ժամանակումը հոգին նիւթից զանազանվումէր գլխաւորապէս ինչպէս շարժողը շարժուողից, այսինքն ինչպէս շարժման պատճառը շարժական նիւթից։ Այժմ սկսումեն հոգին որոշել ինչպէս ներսինը դրսինից, ինչպէս իր մէջ կենդրոնացողը տարածութեան մէջ տարածուողից, այսինքն խորհողը տարածուածից։ Այսպէս հները կեանքի գործողութեան մի ընդհանուր հասկացողութեան մէջ ամփոփումէին հոգին և մարմինը. առաջինն իբրև նորա գործունեայ, երկրորդը՝ իբրև նորա կրաւորական սկիզբը։ Ընդհակառակն նոր իմաստունները, որոնք հոգին մարմնուն հակաենթադրումեն. հարց են զարթացնում նոցա փոխադարձ ունեցած կապի մասին նոցա մէջ եղած միջնորդի մասին։ Զաբարէլը (1532—1589) առաջին անգամ եղաւ, որ հոգին մարմնոյ հետ կապող միջնորդն ընդունումէ Աստուծոյն։ Թէ Կամպանելլայի և թէ Աւգուստինոսի մօտ մենք միևնոյն դրութիւն ենք գտնում, որ է խորհումեմ, ուրեմն գոյութիւն ունիմ—որից սկսվումէ Դեկարտի համակարգութեան շարայարութիւնը։

2. Բնախօսութիւն XVI. XVII. դարերում։ Արդէն XVI. դարում, ինքնուրոյն անդամազննական հետազօտութիւնների վերածնութեան հետ միասին՝ նեարդային համակարգութեան վերայ աւելի ուղիղ տեղեկութիւն ունէին մարդիկ, ինչպէս, Բերենգարի և Վարօլի աշխատութիւններով գլխի նեարդների ծագումն շատ ուղիղ ապացուցած էր։ Նեար-

ղերի զոյգերի թիւը, փոխանակ 7՝ հասցրին 12ի։ Գլխի ուղեղի արտաքին և ներսի մասերը, նորա թաղանթը, որպէս և մանրագոյն նիւթերի զանազանութիւնը լաւ մանրամասնութեամբ որոշուած էին։ Սերվետոն (1509—1553) մինչև անգամ կարելի էր համարում գլխի ուղեղի մէջ կատարուած զանազան հոգեկան գործակատարութեանց որոշման (լօկալիզացեայի) տեսութիւնը տալ։ Նա հոգւոյ բնակարանը համարում էր այսպէս ասուած «Սիլվիոսի ջրանցքը», կողմնակի ստամոքսիկներն՝ արտաքին առարկաներն ընդունելու, երրորդ ստամոքսիկը՝ խորհելու, իսկ չորրորդը՝ յիշողութեան բնակարան։

Թէև հոգեկան գործակատարութեանց ունեցած կապը գլխի ուղեղի հետ պարզ հաստատուեցաւ, բայց միանգամայն կային այնպիսի ուսումնականները, որոնք Արիստոտէլի կարծիքը պաշտպանում էին, թէ հոգին սրտի մէջն է գտնվում։ Այս պաշտպաններից գլխաւորն էր նշանաւոր Անդրէաս Ցեզալպինը (1519—1603)։ Իւր հայեացքը հաստատելու համար նա առաջ էր բերում, արդէն և այն ժամանակ յայտնի՝ գլխի ուղեղի կեղևեայ նիւթի անզգայնութեան իրողութիւնը։ Այս իրողութիւնն այն ժամանակուայ անդամազննողներին շատ էր դժուարացնում, որովհետև մինչև անգամ Վարօլի պէս գիտնականը կարելի էր համարում նորա նշանակութիւնը թուլացնել, միմիայն ենթադրելով, որ ուղեղը, իբրև բոլոր զգացողութիւնների բնակատեղին՝ չէ կարող մի առանձին զգացողութեանն ենթակայ լինել։

Պէտք է ցոյց տալ և այն հանգամանքը, որ XVI. դարում անդամազննողները հերքեցին հնումն արդէն յայտնի զգացողական և շարժական նեարդերի զանազանութիւնը, որոնց անդամազննական նշանները, ճշմարիտ, որ հին ժամանակուայ հեղինակները բոլորովին ճիշտ չէին ցոյց տուել։

XVII որդ դարում նեարդայի բնախօսութիւնն այնքան նոր իրողութիւններով չհարստացաւ, որքան որ ճշմարտութեան մօտիկ ենթադրութիւններով։ Փորձառական հետազօտութեան մասին այս կարելի է ասել, որ առաջին անգամ Սիլվիոսը (1614—1672) գլխի ուղեղի ուղղահայեաց կտրուածք արեց։ Իւր ժամանակին նշանաւոր Ուիլլիսը (1622—1675), մինչև իւր ժամանակն եղածից ուղեղի աւելի լաւ նկարագրութիւն տալով՝ միևնոյն ժամանակ առաջին բնախօս էր, որ աշխատում էր՝ ուղեղի իւրաքանչիւր մասի գործակատարութիւնը ճիշտ որոշել։ Նա հոգեբանական գլխաւոր նշանակութիւնը տալիս է «ուղեղային խոտորնակի դարսուածքներին», որոնց վերայ, նորա կարծիքով՝ գաղափարներ են դրոշմվում, ինչպէս սպիտակ պատի վերայ։ Նա ինքն պաշտպանում էր այն ճըշմարիտ միտքը, թէ զգայական գրգռողութիւնները նոյն իսկ նեարդերի վերայ ներգործումն զգայարանքներումը վերջաւորուած նոցա ծայրերի միջոցով։

XVII որդ դարի վերջերքումը մի ենթադրութիւնն առաջ է գալիս, թէև անգոհացուցիչ է, բայց ուշադրութեան արժանի է, իբրև առաջին

փորձ նեարդային գործունէութեան մեքենայական բացատրելուն։ Շուտով խոշորացուցի գիւտից յետոյ Մալպիգին (1628—1694) նորան գործ դրեց ուղեղը հետազօտելու համար և այն համոզմանը հասաւ, որ նորա կեղևային նիւթը մի տեսակ լորձունքների հաւաքածու է։ Միւս կողմից, Ռիդլէյն (17 որդ դարում) գտաւ, ինչպէս որ ենթադրում էր ուղեղի ամուր թաղանթումը մկնակային թելեր։ Այս իրողութիւնների վերայ հիմնուելով, հռովմայեցի ուսուցչապետ Պաչչիոնին (1664—1726) այն եզրակացութեան հասաւ, որ ուղեղի ամուր թաղանթը սրտի պէս է ներգործում և, իւր սեղմուելովն ուղեղի վերայ ճնշումն գործելով՝ նորա լորձունքներից նեարդային հիւթը դուրս է մղում դէպի նեարդերը, որոնց միջով արիւնի պէս հոսումէ և կենդանացնում նոցա։ Բայց այս տեսականութիւնն երկար ժամանակ չէր կարող մնալ, որովհետև սա հերքվումէ նորանով որ ամուր թաղանթը գանգին ամրապինդ կպած է։ Յետոյ Ռիւշը (1638—1731) 1699 թուակ. ցոյց տուեց ուղեղի կազմութեան մասին Մալպիգի ուսման անճշտութիւնը իսկ Ֆանտոնին (1675—1754) ամուր թաղանթի մկնակային կազմութեան մասին եղած ենթադրութիւնը։

Հոգեբանութեան համար աւելի ուղղակի նշանակութիւն ունեցան զգայարանքների մասին առած անդամազննական և բնախօսական աշխատութիւնները։ Առաջին գիտնական հետազօտութիւնները տեսութեան գործարանի վերայ պատկանումեն նշանաւոր Կեպլերին (1571—1630)։ Նա բացատրեց որ բիւրեղային մարմնոյ իսկական նշանակութիւնը մարմին բեկանելն է, այն ինչ նորանից առաջ՝ բիւրեղային մարմինը նոյն իսկ տեսութեան գործարան էին համարում՝ նոյնպէս ճիշտ ցոյց տուեց որ ցանցի նշանակութիւնն է տեսութեան տպաւորութեան պատկերացնելը։ Կեպլերի այս եզրակացութիւնները հաստատուեցան եզուիտ Շէյների (1619) մանրամասն հետազօտութիւններով, անդամազննութիւնն և բնախօսութիւնն այն ժամանակ կարելի չափ եղածին կատարելութեան աստիճանին հասցրեց։ Մեծ փիլիսոփան Դեկարտն իւր Դիօպտրիկի մէջ առաջին անգամ ցոյց տուեց որ բիւրեղային մարմինը տարածութեան յարմարվումէ ո՛չ թէ մօտենալովը կամ հեռանալովը նորանից (տարածութիւնից), այլ իւր մակերևոյթի փոփոխութեամբը։

Նախ քան գիտութեան մէջ վերջնականապէս կանոնաւոր հայեացք կը հաստատուէր, թէ տեսութեան տպաւորութիւններն աչքի ո՛ր մասումն են առաջանում, կային այնպիսի ուսումնականներ, որոնք հակաճառումէին նորան։ Դին—Պէյրսկի կարծիքն որ ասումէր, թէ տեսութեան տպաւորութեանց տեղը ջրային հեղանիւթն է, նա շատ կուսակիցներ չգտաւ։ Մարիօտի ապացոյցներն աւելի մեծ ուշադրութիւն գրաւեցին. նա ցոյց տուեց որ տեսութեան տպաւորութեան դեղն աչքի անօթային թաղանթն է։ Մարիօտը հետևեալ կարևոր իրողութիւն բացեց թէ մենք լուսոյ տպաւորութիւնը չենք ստանում՝, երբ որ լոյսն ընկնումէ տեսութեան նեարդի աչքի մէջը մտնելու տեղի վերայ։ Այս նշանաւոր ֆիզիկոսը ստ-

րանից եզրակացրեց, որ տեսութեան ներդի շարունակութիւնը, որ է ցանցային թաղանդը, դէպ ի լոյսն անզգայ պիտի լինի։ Այս առիթով յարուցած բանակռուի մէջ Մարիոտի հակառակորդները շատ մասնաւոր ընդիմախօսութիւններ էին առաջ բերում. բայց Մարիոտի գտած իրողութեան ընդհանուր նշանակութիւնը դարձեալ անբացատրելի մնաց. որովհետեւ ուսումնականների համար դեռ եւս պարզ չէր՝ որ եթէ ներդային թելերը լուսով չեն գրգռվում, սորանով չէ հերքվում ներդերի ծայրերի զգայնութիւնը, որ այս ծայրերը ներդի, աչքի մէջը մտած տեղումը գոյութիւն չունին։

Բիւրեղային մարմնոյ բացառական նշանակութիւնը, իբրեւ մարմին բեկողը՝ հաստատուեցաւ Լանիէ եւ Մետր—Ժանի գիւտովը, որոնք ցոյց տուին, որ նա բիւրեղային մարմնոյ մթութեան գոյանալու տեղն է, և թէ բիւրեղային մարմինը հանելուց յետոյ էլ տեսութեան ընդունակութիւնը պահպանվումէ։ Յիշած հեղինակներից վերջինս, կանոնաւորապէս բացատրեց բբի սեղմելն և ընդլայնանալն։ Նիւտօնի փորձառական հետազօտութիւնները տեսութեան գործարանի մաթիմաթեկական և ֆիզիկական տեսականութեան մշակելուն մեծ զարկ տուին։

Լսելեաց գործարանի նկատմամբ աշխատութիւնները միմիայն մասնաւոր անդամազննական մանրամասնութիւններով էին սահմանափակվում, որոնք հոգեբանութեան համար մեծ նշանակութիւն չունէին։ Բայց այնու ամենայնիւ այս աշխատութիւնները նպաստեցին ականջի ներքի մասի աւելի ճիշտ ուսումնասիրելուն և առաջ բերին շատ թէ քիչ ճշմարտանման գուշակութիւններ լսելեաց զգացողութիւնների առաջանալու տեղի մասին։ (Կլօդ—Պերրօ, Վալսալվա եւն)։

Համառօտ ծանօթանալով XVI և XVII դարերի նոր հոգեբանական ուսմունքների թէ գրաւականների հետ և թէ ներդային համակարգութեան ու զգայարանների բնախօսութեան յառաջադիմութեան (զարգացման) հետ, այժմս տեսնենք նոր հոգեբանութեան, սկսած Դեկարտից՝ հետեւողաբար և համակարգաբար զարգացումն։

(Շարունակելի) Գաբրիէլ Տէր Գաբրիէլեանց.

ՀՈԳԻ ԵՒ ՄԱՐՄԻՆ

ՃԱՌԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԲԷՆ

ՊՐՕՖԵՍՈՐԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԷԲԻՐԴԻՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

(Շարունակ. Արարատ Բ. Ը.)

Զգային կամ հանդուցանման վանդակներն կլինին չափազանց տարբեր ձեւով, բոլորակ, ձուաձեւ, գիսաւոր, աստղաձեւ եւն։ Նոքա կբաղկանան կակուղ զանգուածից, որ կձեւացնէ մարմինն վանդակի և կշրջապատէ մի կամ քանի մի փոքրիկ գնդակներ, որոց շուրջն շատ անգամ կգտնուին

գունաւոր հատիկներ։ Նոցա տրամագիծն կհաւասարի $\frac{1}{300}$ $\frac{1}{3000}$ բթաչափի։ Թէպէտև գորշագոյն նիւթոց սակաւաքանակութեան պատճառաւ համեմատաբար սպիտակի հետ, նմանապէս վանդակների տրամագծի մեծութեան պատճառաւ, նոցա՝ այսինքն հատիկների թիւն՝ ուղեղի ընդմիջող հատուածոյ վերայ սակաւ է քան թիւն ջղային նրբաթելից, սակայն որովհետև նոքա կգտնուին երեք չափուց մէջ, իսկ նրբաթելերն միմիայն երկուքի մէջ, ուստի այն թիւն առաւել մեծ է քան թիւն ճիւղատարած ջղային նրբաթելից, թէպէտև ո՛չ այնքան մեծ է, ինչպէս ընդհանուր թիւն բոլոր նրբաթելական միաւորութեանց։



Պատկեր 1․ Ջղային վանդակք նոցա գնդակաց հետ մեծացուցեալ 150 անգամ a և b փոքրիկ ուղեղից c և d երկայնաձև ուղեղից․

Մեք այժմ կարող եմք ունենալ գաղափար ջղային տարրոց անթիւ քանակութեանց մասին, որք կան ուղեղի և ջղերի մէջ։ Փորձել էին հաշուել առանձին ջղերի մէջ գտնուած նրբաթելերի թիւն։ Երրորդ՝ ուղեղային ջիղն (ընդհանուր շարժող աչաց ջղոյն) կբաղկանայ ո՛չ պակաս քան 15000 նրբաթելերից։ Զգայական ջղերի մէջ նրբաթելերն առաւել բարակ են և նոցա թիւն մեծագոյն տեսողական ջղի մէջ, (Nervus opticus) պէտք է լինի խիստ շատ, հաւանական է լինել գոնէ 100000, գուցէ և աւելի։ Թիւն ջղային նրբաթելերի՝ որ կկազմեն ուղեղի սպիտակ նիւթն, պէտք է հաշուել հարիւրաւոր միլիօններ։

Այդ ահագին քանակութիւնն ինքնակայ ջղային տարրոց, կբացատրէ թէ հնարաւոր է լինելն և մեծ թուով կապակցող թելերի, որք կարևորք են մարդոյ վերյիշատակեալ սովորական գործողութեանց համար։

Ինչ որ կվերաբերի ֆ—ու—նկ—ց—ի—ն ջղային տարրոց, մեք նմանապէս գիտեմք քանի մի սորան վերաբերեալ նշանաւոր փաստեր։ Նախ՝ պէտք է նկատել, որ ջղային նրբաթելերն կընթանան անընդհատ և անխառնաշփոթ միմեանց հետ ջղային կեդրոնէն ցըրջանակապատ վերջաւորութիւնքն՝ այնպէս որ իւրաքանչիւրն կկատարէ ըստ կարևորութեան միմիայն իւր առանձին ծառայութիւնն։ Առանց սորան՝ չնայելով նոցա թուոց մեծութեանն, չէր լինի բազմատեսակութիւն միաւորութեան եղանակների մէջ։ Գլխաւոր

նշանակութիւն վերոյիշատակեալ երկուց թաղանթից կկայանայ ըստ երեւութին՝ սռնակաձեւ գլանակի խապառ անջատելոյ մէջ։

Այլեւ հարկ է նկատել որ զանազան մասերն մարմնոյ զոր օրինակ ձեռի կաշին նորանց մկանանց հետ կհաղորդին ո՛չ ուղղապէս, այլ միջնորդութեամբ ջղային կեդրոնի։ Իւրաքանչիւր ջղային նրբաթելն՝ որ կանցնի մարմնոյ երեսէն կամ աչքերէն կամ ականջէն նախ և առաջ կուղղադիմէ դէպի թիկնամիջի ուղեղն կամ դէպի որեւիցէ մասն գլխոյ ուղեղի և իւրաքանչիւր դրդումն (импульсъ) որն կարելի է տալ շարժմանը, գրգռելով սոյն նրբաթելն, դուրս կգայ որ և իցէ ջղային կեդրոնէ։ Ինչպէս սուրհանդակատան մէջ չկայ ուղղակի հաղորդակցութիւն երկու անցորդական ճանապարհաց հետ, այլ իւրաքանչիւր նամակն պէտք է նախապէս անցանէ ի ձեռն կեդրոնական կայարանի թղթատան (бюро) ըստ այսմ փոխադրութիւն իւրաքանչիւր ազդեցութեան մարմնոյ մի անդամից դէպի միւս անդամն, կըկատարի միմիայն միջնորդութեամբ կեդրոնի, այսինքն (քանի մի բացառութեամբ) մասամբ ի ձեռն ջղային նիւթոց, որ ամփոփուած է գանգի ողնայարական սիւնեկի մէջ։ Ամենայն հաղորդակցութիւն կեդրոնացած է, այդ պատճառաւ կերեւի ո՛չ միայն մեծ տնտեսութիւն հաղորդակցութեան մէջ, այլ և կհեռանայ ընդհարելն զանազան գրգռմունքի։

Երբ մեք կասեմք, որ ամենայն ջղերն կվերջանան ջղային կեդրոնաց մէջ, ուրեմն դորանով կհասկանամք գորշագոյն նիւթն կամ համակուտակումն նրբաթելից և վանդակաց։ Իւրաքանչիւր ջիղն կվերջանայ ջղային վանդակի մէջ, նորանից դուրս կելանեն մի կամ քանի մի նրբաթելեր, որք կամ ուղղակի կվերադառնան դէպի շրջապատագիծն (կամ ծաւալագիծ) (периферіи) մարմնոյ կամ կմտնեն յայլ վանդակս, որից դուրս կելանեն նոր նրբագոյն երակք (թելք մարմնոյ) (фибры) որք կգնան նմանապէս կամ դէպի վանդակներն կամ դէպի կաշին։ Գլխոյ կամ թիկնամիջի ուղեղոյ մէջ նրբաթելերի մեծ մասն կըկապեն վանդակներն միմեանց հետ և միայն նոցանից սակաւներն յերեւան կելանեն դէպի մկանունքն, և այսպէս կըկազմեն կապն շարժմանց գործարանաց հետ։

Այսպէս և վանդակներն են իբրեւ կէտք զուգադիպութեան ել և մուտ գործող ջղերի, իբրեւ միակ միջոց հաղորդակցութեան շրջապատական կամ պատենական մասանց մարմնոյ միմեանց հետ։

Նոցա միջոցաւ կկազմակերպուի բարդ հաղորդակցութեանց այն համակարգութիւնն՝ որով ազդեցութիւնն՝ որ կկրէ մի անդամն, կարող է լինել պատճառ բովանդակ գրգռմունքների տպաւորութեանց մարմնոյ միւս անդամների մէջ։ Չկայ ո՛չ մի մկան մարմնոյ, որոյ վերայ անհնարին լինէր կատարել ուղղակի կամ անուղղակի ազդեցութիւն ցուցամատի ծայրի վերայ ճնշման միջոցաւ։ Այդ հաղորդակցութիւնն կկատարուի ջղային վանդակներով այնպէս՝ ինչպէս շնորհիւ բարեկարգ և կանոնաւոր կարգադրութեան սուրհանդակատանց և անցորդական մեծ ճանապարհաց՝ նամականիքն կարելի է շատ շուտով հասցնել Եւրոպայի մի գիւղէն միւս գիւղն։

Երրորդ կարեւոր կէտն՝ որ կվերաբերի ջղային տարրց—Նրբաթելից և վանդակաց, է նոցա նէ-րն կամ բաղադրո-բէ-ան։ Ներգործող մասն կամ ,ննակաձև գլանակն Նրբաթելից կբաղկանայ նիւթոց սպիտակուցից։ Վանդակներն ևս կբաղկանան նոյն իսկ նիւթերից միաւորելով ճարպային հատիկներն։ Նիւթն երկուց տարրց չափազանց անհաստատ է և հեշտութեամբ կենթարկի փոփոխականութեան զանազան արտաքին ազդեցութեանց պատճառաւ, վանդակներն ևս առաւել կհամարին փոփոխական քան Նրբաթելերն։ Մեք չունիմք պարզ ապացոյց փոփոխականութեան բնաւորութեան մասին, որ կնկատուի սորա և Նորա մէջն։ Միանգամ սկսուելով՝ այդ փոփոխականութիւններն կտարածին դէպի արձակ դծերն հաղորդակցութեան և կրովանդակին ջղերի կազմութեանց (стуруктуры нерва) փոփոխականութեան մէջ։ Վերանորոգումն փոփոխական կազմութեան կկատարի արիւնով, որն առատօրէն շրջանառութեամբ ջղային Նրբադոյն երակաց կամ թելից մէջն, և այն՝ գորշագոյն այսինքն վանդակապահ նիւթոյ մէջն ևս առաւել առատ է քան սպիտակ այսինքն Նրբաթելապահ նիւթոյ մէջ։ Հաշուած է (Հերպերտ Սպենսեր) որ գորշագոյն նիւթոյ մէջ շրջանառութիւնն արեան հինգ անգամ աւելի է քան սպիտակ նիւթոյ մէջ։ Դոյն այդ անբաւարար ջղային ոստայնից յայտնի փոփոխականութեանց մէջ մեք ունիմք երևոյթն այն բանի, որ կանուանի ջղային ոյժ կամ զօրութիւն։ Այդ երևոյթներն ունին տարբեր բնաւորութիւն, մեքենայական, բնալուծական, ջերմական և այդ ամենայն կըկայանան Նեարդային նիւթոց հիւլէական փոխակերպութեան մէջ, այն փոխակերպութեան մէջ՝ որ համեմատ ազատուած ուժերի քանակութեան կվարձատրի արեան հոսելովն։ Դառնամք այժմ դէպի ցուցմունքն զուգընթացութեան հոգեկան շարժման և բնական փոփոխութեան։ Մի ամենանշանաւոր զուգադիպութիւն արդէն ցուցած է և հետևաբար մանրամասնօրէն կպարզուի, այն է պէսպէսութիւնն և բազմաքանակութիւնն մեր հոգեկան շարժմանց ի միոյ կողմանէ և բազմաքանակութիւնն ջղային տարրց ի միւս կողմանէ։

Եթէ մեր ջղային համակարգութիւնն բաղկանայր ընդ ամենոյն հազար ջղային Նրբաթելերից և Նոյնչափ վանդակներից, ուրեմն ո՛չ ոք չէր կարող բացատրել ի՞նչ կերպ Նոցանով կարելի է ըստ կարգին գործել այնպէս՝ որպէս զի կատարուէին մեր զգացմանց և մտաց բոլոր տարբեր արտաքին երևոյթներն։ Բայց չնայելով՝ որ բազմաթիւ են և զանազանակերպ մեր հոգեկան դրութիւնքն, մեր ջղային համակարգութիւնն ըստ իւր ահագին մեծութեան կամ ծաւալման (объмъ) և զարգացմանն, բոլորովին կհամապատասխանէ Նոցա։

Զգացմանց գործարաններն կներկայացնեն մեզ համապատասխանութեան օրինակ, որ կայ ջղային տարրց քանակութեան և գործողութեան բարդութեանց մէջ։ Տեսողական ջիղն է ամենամեծ բոլոր զգայական ջղերից Նորա ճիւղատարածումն աչաց ցանցաձև թաղանթի մէջ չափազանց բազմաթիւ են և կներկայացնեն իբրև թանձրախիտ ցանց։ Բացի Նրբաթելերից՝

մեք այնտեղ կտեսնեմք և վանդակներ, որպէս զի բարձրացնել զգացողութիւնն ամենաթեթև ընդհարման լուսափայլ եթերի։

Առաւել իմացական զգացմանց տեսանելեաց, լսելեաց, շօշափելեաց ճշտութեան և տպաւորութեան մասանց բաժանմանն հասանելոյ նպատակաւ ունին շուրջն առանձին նրբաթելեր, որք կանջատեն թաղանթներն։ Հոտոտելեաց գործարանի ջղերն կբաղկանան հիւսուածքից նրբաթելից, որք զուրկ են թաղանթից և համեմատ այնմ․ հոտոտելեաց տպաւորութիւնքն կլինին ո՛չ պարզօրէն․ և ի մի ամբողջութիւնն կկազմեն, առանց զանազանելոյ մասերն՝ (Սպէնսեր)։

Սպէնսեր ցոյց տուեց, որ տեսանելեաց և լսելեաց զգացողութիւնքն զօրացուցանելոյ համար՝ ի դէպս չափազանց թոյլ տպաւորութեանց՝ կան «բազմացուցիչներ» (мультипликаторы) կամ՝ հնարք ընդհարման ուժգնութիւնն բարձրացնելոյ համար։ Սապէս ցանցն կբաղկանայ բարակ նրբագոյն երակներից և ջղահիւս վանդակներից (առանց ուղեղային թաղանթի) որոց նիւթն ևս առաւել գրգռեցուցիչ է քան նիւթն նրբաթելից։ Ականջամիջի մանր աւազահատիկներն (Отолоты) և գաւազանիկներն, շարժուելովք կսաստկացնեն գործողութիւնքն լսողական ջղոյ։

Մոյգ գունաւորութիւնն (пигментъ) աչաց որ կտեսնուի բբաց միջէ իբրև մոյգ կինամոնագոյն ստուեր, ունի էական նշանակութիւն լաւ տեսողութեան համար, վասն զի նա կզօրացնէ լուսոյ ներգործութիւնն։ Դօկտոր Ուլիամ Օգլ առանձին ուշադրութիւն դարձոյց այն իրական փաստերի վերայ, որ գունաւորութիւնն կտեսնուի երբեմնապէս և հոտոտելեաց մէջ, հաւանական համարելով մօտաւորապէս այդ փաստին՝ զօրեղ նրբութիւնն հոտոտելեաց, որ կնշմարի յայդ դէպս․ նա՝ կվերագէ նրբութիւնն հոտոտելեաց խափշկաց (негръ) նոցա մէջ եղած գունաւորութեանց առատութեանն։ Աֆրիկեցի սպիտակ արաբների (альбиносы) և սպիտակագոյն կենդանիների թէ տեսանելեաց և թէ հոտոտելեաց նրբութիւնն առաւել նուազ է, քան մոյգ գունաւորներինը։ Մորթաշատ ականջաց ներքին խորշերի մէջ նոյնպէս գտնուել է գունաւորութիւն։ *)

Այդ օրինակ փաստերն կցուցանեն թէ ի՞նչպիսի խորին ազդեցութիւն կարող է ունենալ կազմութիւնն բնական գործարանաց՝ հոգեկան բնաւորութեան գործունէութեան վերայ։ Զնչին տարբերութիւնն՝ որ նշմարուած է զգացմանց գործարանի գունաւորութեանց մէջ․ տալով այդ զգացմանց տպաւորութիւն, կարող է որոշել կենդանոյ ճաշակներն, հակումներն, և հրապուրանքն, միով բանիւ նորա բոլոր վիճակն։ Մարդոյ մէջ գտնուած սուր և պղտու զգայականութիւնն մի կամ երկու գլխաւոր զգացմանց կարող է ունենալ ազդեցութիւն բովանդակ բնական և բարոյական բնաւորութեան վերայ։ Հակադիրն ընդ մէջ զգայական և անդրադարձական (рефлектирующимъ)

---

*) Anosmia, william Ogle— ի յօդուած Medico — Chirurgscal Transacetions vol. Lm.

բնութեանց կարող է ծագիլ զգացմանց արտաքին գործարաններից, անգամ անկախ բնական յատկութիւնից ուղեղի։ Ցայդ դէպս ջղային համակարգութիւնն հետեւելու է առանձին զգացման փոխանակ նորա առաջնորդելու։

Նմանապէս ինչ որ կվերաբերի զուգընթացութեան մարմնոյ և հոգւոյ և նոցա գործունէութեան հնարից՝ չնայելով մեծագոյն տարբերութեան հոգեկան և մարմնական գործունէութեանց բայց և այնպէս հնարաւոր է գտնել նոցա մէջ կէտիր զուգադիպութեան։ Մի ամենանշանաւոր կէտն զուգադիպութեան է ժամանակամիջոցն։ Չափազանց սրամիտ և համոզակեր փորձերով ապացուցուած է որ ջղային ուժոյ տարածման արագութիւնն հաւասար է մօտաւորապէս 90 *) ոտնաչափից մի վայրկենի մէջ։ Այդ չափերն առել են ջղային թելերի տարածութեան վերայ և չեն վերաբերիլ անցման կեդրոների գորշ նիւթոյ միջով իւրեանց բազմաթիւ վանդակների հետ։ Ժամանակն լիաշրջանի գործողութեան՝ սկսեալ զգացմանց գործարանների գրգռմանէն և աւարտեալ յայտնի շարժմունքով կախի մասամբ շարժման ժամանակէն ընդ երկայնութիւնն ջղոց և մասամբ անցման ժամանակէն կեդրոնամիջէն, ուր յայտնի թիւ վանդակաց անշուշտ անցնելու է։ Փորձեցին որոշել երկարատեւութիւնն այդ վերջին գործողութեան, որ ըստ բնաւորութեան առարկային լինելու է չափազանց տարբեր, որովհետեւ շատութիւնն կեդրոնաց՝ որոց միջովն անցնելու է ջղային յորձանքն կարող են լինել տարբերք և բաց յայնմանէ հնարաւոր է յամեցնել մի յորձանքն միւսներով։ Դէպքն ամենասակաւ ներքին յամեցման կկոչի անդրացոլական գործունէութիւն երբ զհետ գրգռման՝ առանց միջնորդութեան կամաց կհետեւի շարժումն նմանապէս ձեռքն կտեւոյ միջոցին կհետեւի ակամայ շարժումն։ Հելմհօլց գորտերի վերայ փորձ փորձելով գտաւ, որ անդրացոլական գործունէութիւնն կպահանջէ ժամանակ $\frac{1}{50}$ ց $\frac{1}{40}$ վայրկենի։ Ցայդ դէպս երկարութիւն ամբողջ ջղային ճանապարհի կարող էր լինել ո՛չ աւելի քան մի վերշոկ (վեշտասաներորդ մասն կանգունի) այնպէս որ եթէ այդ ճանապարհն լինէր անընդհատեալ ջղային թել, ուրեմն այդ թելի անցնելու համար կպահանջուէր հազիւ թէ 0 02 վայրկեան։

Չափել են ժամանակն՝ որ անցել է զգայական տպաւորութեան և կամաց արտայայտութեան մէջ և այդ այնպիսի հանգամանամիջոցին, որք կբացառնէին հնարաւորութիւնն փոխադարձական յամեցման զանազան դրդմանց։ Դորա համար կսահմանեն ժամանակ այն իսկ վայրկենից, երբ մարդն նկատեց տուած նշանն մինչ ցայն վայրկեանն, երբ նա պատասխանեց նորան կամքն յայտնելով։ Կհամեմատեն երկու դէպքեր, նախ՝ երբ մարդ գիտէ յառաջագոյն թէ որպիսի՞ տպաւորութիւն կստանայ և որպիսի՞ շարժումն կատարելու է։ Ցայդպիսի դէպս նա կդարձնէ իւր ուշադրութիւնն միմիայն

*) Այդ ամենամեծ թիւն է, որ գտել են մինչեւ ցայժմ, արագութիւնն կատատծի 30 եւ 90 ոտնաչափից մէջ մի վայրկենումն։

Ծանօթ. Գերմանական Թարգմանչի։

այն վայրկենաժամի վերայ երբ կընդունէ տպաւորութիւնն։ Երկրորդ դէպս՝ մարդ չգիտէ ոչ այս և ոչ այն պայմանն, ապաուրեմն, պարտաւոր է յառաջագոյն կատարել դատողութեան գործողութիւնն։ Այդ գործողութեամբն պայմանաւորելով՝ զանազանութիւնն ժամանակամիջոցի համեմատելով առաջին դէպքի հետ՝ համարեա թէ հաւասար է $\frac{1}{11}$ վայրկենի։ Կբաժանեն երկու անձինք ի ձեռն դիմակալի։ Միոյն պէտք է արտասանել որևիցէ վանկ մի, բայց միւսն կրկնելու է այն որքան կարելի է արագապէս։ Եթէ այն վանկն պայմանաւորել են յառաջագոյն, ուրեմն դորա համար կպահանջի $\frac{1}{6}$ ց $\frac{1}{4}$ վայրկեան եթէ ո՛չ $\frac{1}{12}$ վայրկենից աւելի։

Du Bois Reymond (Դիւբուա Ռէյմոնդ) յառաջ կբերէ իբրև օրինակ Կիտոս ձուկն, երկարութեամբ ց90 ոտնաչափից, որոյ տտան մէջ վարսեցին երկաթի գործիք (гарпунъ)։ Որպէս զի այդ տպաւորութիւնն հասնի ուղեղին կպահանջի մի վայրկեան, իսկ նոյնը ուղեղի միջէն անցնելոյ համար կպահանջի $\frac{1}{10}$ վայրկենի. սակայն շարժողական գրգռումն տտան հասցնելոյ համար՝ կպահանջի ևս մի վայրկեան, նոյնպէս մակոյկն ձկնորսի ունենալու է աւելի 2 վայրկեան ժամանակ, որ խոյս տայ վտանգէն։

Այսպէս ուրեմն մեք ունիմք մի կողմանէ բնազննական ապացուցութիւնք, որ ջղային ոյժն կպահանջէ որոշեալ ժամանակ իւր արտայայտութեան համար, իսկ միւս կողմանէ հոգեբանական ապացուցութիւնք, որ հոգեկան ոյժն իւր արտայայտութեան համար՝ այսինքն զգայական առընկալութեան, մտաց կամ կամաց գործողութեան համար կպահանջէ համապատասխան ժամանակ։ Մեր մտածողութիւնն ոչ մի ժամանակ չէ կարող յառաջել բնական ընթացքին ջղային ուժոյ. բայց միայն իսկաւ դէպս մեր մտածողութիւնն կկատարի նոյնպիսի արագութեամբ, որպիսի արագութեամբ կարէ տարածել ջղային ոյժն։ Դորա պատճառն այն է, որ մեզ հարկ է յաճախակի հաւասարակշռել հակադիր միտքն, այսինքն հակադիր ջղային յորձանքն կընդհարին և կարգելու մին զմիւսն առաւել կամ սակաւ ընդ երկար ժամանակս։ Առաջ բերեալ վերոյիշեալ փորձողութիւնքն կցուցանեն ամենասակաւ ժամանակամիջոցն, որ կպահանջի հոգեկան գործողութեան համար։ Համապատասխանութեան այլ կէտն, որ կվերաբերի ժամանակին՝ է կարևոր միջոց որպիսի ևիցէ զգացողութիւն կամ յուզումն արտադրելոյ համար։ Ամենայն գրգռումն պէտք է շարունակել ցաւհմննեալ ժամանակ այնու պատճառաւ, որպէս զի զգացումն կատարուի առաւել պարզ և նկատելի կերպիւ։ Եթէ կամիմք զգալ քաղցր համ, ուրեմն առարկային մեր ջղերին դիպչելուց յետոյ՝ պէտքէ սպասել առ ժամանակ մի։ Այդ կատարելապէս կհամապատասխանէ մեր հասկացողութեանց ջղային ուժոյ յատկութեան մասին, հիւլէական փոփոխութիւններն ջղային կեդրոնաց՝ որք զգացմանց հետ կլինեն՝ կպահանջեն սահմանաւորեալ ժամանակ։ Սակայն զգացումն իսկոյն չանհետանայ, երբ առարկայն հեռացուցած է։ Նմանապէս հիւլէական գործունէութիւնն՝ որ սիսուած է ջղային կեդրոնաց մէջ, չդադարել յանկարծակի, երբ կդադարի գրգռումն ջղոց։

(Թարգմ.) Ս. Ե. Մ.

(Շարունակելի)

. . . Խմբագրութեան «Արարատ» ամսագրոյ.

Սուրմալուայ (Արշարունեաց գաւառ) գործակալ բարեկրօն Սիմէօն Քահանայի Տէր Ահարօնեան Փանիկեցւոյ հրաւիրագրովն այս օրերս գնալով անդ ի Փանիկ գիւղն՝ օրինակեցի 3 փոքր տող բեւեռաձեւ արձանագրութիւն՝ Արմաւրից փոխադրած յԱխ-Մամատ պարսկաբնակ գիւղն՝ սանդխանման լեռ կապոյտ քարի վերայ փորագրած. որոյ օրինակն տալով Խմբագրութեանդ՝ խնդրեմ հրատարակել հնախուզից հետաքրքրութեան համար. և իբրև փոքրիկ զարդ «Արարատայ» էջերին։

Ցանձնեցի յիշեալ գործակալին և յուսով եմ, որ գաւառի գիւղօրայքը շրջելու միջոցին՝ չմոռանայ հարցուփնդիր լինել այսպիսի ազգային հնութեանց մասին *), ըստ որում տեղական ժողովուրդը քանի տարուց հետէ սովորութիւն է արել քակել և բերել շինութեան համար ոչ միայն Ցօլակերտի պարսպաց քարերը, այլ և Արմաւրայն. որոց մասին թէև քաղաքական իշխանութիւնն վերջին տարիներս խստիւ պատուիրել է պահպանել այն հնութիւնքն հնագիտական ժողովի հետաքրքրութեան համար։ Զայն քարը պատուիրեցի բերել յԷջմիածին։

МЕՍՐՈՎԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ.

Է. ԱՐՁԱՆԱԳԻՐ ԱՐՄԱՒՐԱՑ.



(*) Երանի՜ թէ միւս գաւառաց գործակալքն եւս նոյնպէս աշխատէին որոնել ու գտնել այսպիսի ազգային հնութիւններ։

ԱԶԳԱՅԻՆ

Տարւոյս Ապրիլեան ընտրութիւնից յետոյ Թագաւոր Կայսրը անցեալ Յուլիսի 18ին բարեհաճեց Նոր Նախիջեւանի և Բեսարաբիոյ թեմի առաջնորդ և Սինոդի աւագ անդամ ամեն. Տ. ՄԱԿԱՐ արքեպիսկոպոսին հաստատել ամենայն Հայոց Կաթուղիկոս և Ծայրագոյն Պատրիարք Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի:

Այս բերկրաւիթ լուրը հաղորդող հեռագիրը «Արարատայ» Օգոստոս ամսագրում՝ հրատարակեցինք կցելով Նորին Վեհափառութեան Տ. Տ. ՄԱԿԱՐ Կաթուղիկոսի համառօտ կենսագրութիւնը առանց սեթեւեթի՝ պաշտօնական ցուցակ ծառայութիւնից քաղելով: Այժմ՝ հետաքրքիր ընթերցողներին բաւականութիւն տալու համար հայ թերթերից արտատպումենք այն հրովարտակները՝ որոնցով Օգոստափառ Թագաւոր Կայսրը իւր հայրական խընամքն ու սէրը արտայայտելով դէպի հայ ազգը՝ հաստատումէ կաթուղիկոս և պսակումէ Վեհափառ Հայրապետին վեղարի ադամանդեայ խաչով և սրբոյն Աղէքսանդրի Նեւսկւոյ շքանշանով: Ահա հրովարտակները:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

—

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱԿԱՐԱՅ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

Անհատանելի ձեռօքն Աստուծոյ

ՄԵՔ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԵՐՐՈՐԴ

Կայսր և Ինքնակալ ամենայն Ռուսաց.

Մոսկվայի, Կիեվի Վլադիմիրի, Նովգորոդի Թագաւոր Ղազանի, Թագաւոր Աժդարխանի, Թագաւոր Լեհաստանի, Թագաւոր Սիբիրի, Թագաւոր Թաւրիկեան Քերսոնի, Թագաւոր Վրաստանի, Արքայ Պսկովի և Մեծ Իշխան Սմոլէնսկի, Լիտվայի, Վոլինի, Պոդոլիայի և Ֆինլանդիայի, Իշխան

Էստլանդիայի և Սեմիգալիայի, Սամոգիտի, Բելոստոկի, Կորէլիայի, Տվէրի, Եուգորի, Պերմի, Վեատկայի, Բոլղարիայի և այլոց· Տէրայ և Մեծ Իշխան Նիժնովեան երկրի Նովգորոդի, Չերնիգովի, Ռեազանի, Ռոստովի, Եարոսլաւի, Բելօզերի, Ուդորի, Օբդորի, Կոնդիայի, Վիդէբսկի, Մստիսլաւի և բոլոր Հիւսիսային երկրի Հրամայող, և Թագաւոր Իվերիայի, Կարթալինիայի և Կաբարդիայի երկրի և Հայոց նահանգի, Չերքէզների և լեռնական իշխանաց և այլոց ժառանգ Թագաւոր և Տէր, Թագաւոր Թուրքեստանի, ժառանգ Նորվեգիայի· Դուքս Շլէզվիգ—Հոլշտէյնի, Ստորմարնի, Դիտմարսէնի և Օլդէնբուրգի և այլն և այլն։

Թող յայտնի լինի բոլոր Հայ ազգին, որ ունկն մատուցանելով նորա հոգևոր ներկայացուցիչների ցանկութեան, որ հանդիսապէս արտայայտած է Էջմիածնում 21-ին Ապրիլի ներկայ 1885 թուականի, Մենք հաստատում ենք Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի հայ լուսաւորչական թեմակալ առաջնորդ և Սինօդի անդամ Մակար արքեպիսկոպոսին յաստիճան Էջմիածնի Պատրիարքի և ամենայն Հայոց Կաթուղիկոսի։ Աղօթում ենք առ ամենաբարձրեալն Աստուած, Օրհնեսցէ ծայրագոյն Պատրիարքին ի մեծ ծառայութիւն Աստուծոյ, Մեզ սիրելի բոլոր Հայոց ազգի բարօրութեան և հոգևոր փրկութեան համար։

Տուած է Մեր աթոռանիստ քաղաքում Ս. Պետրոսի, յամի Փրկչական 1885 Յուլիսի 18-ին, և Մեր թագաւորութեան հինգերորդ տարին։

Իսկականի վերայ Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով գրած է՝

ԱԼԷՔՍԱՆԴՐ.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

ՍՐԲԱԶՆԱՍՈՒՐԲ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԱԿԱՐ

Ձեր երկարատև հոգևոր ասպարէզը գրաւեց Ձեր Վեհափառութեան համար հայ ազգի հաւատարմութիւնն, որ ընտրեց Ձեզ գահակալ Հայաստանի Լուսաւորիչ Ս. Գրիգորի գահի։

Տեսնելով Ձեր հովուապետական գործունէութեան մէջ Իմ սրտին յոյժ մօտիկ բարիքը Հայաստանեայց եկեղեցւոյ և սորա զաւակաց հոգևոր յառաջադիմութեան, ամենաողորմածաբար շնորհում եմ Ձեզ, վեղարի վերայ կրելու համար, ադամանդեայ խաչ՝ հաւատոյ սուրբ նշանն, որ միապէս ոգևորում է և հովիւներին և՛ նոցա հօտերին։ Յանձնելով Ինձ աղօթից Ձերոց, մնում եմ առ Ձեզ բարեհաճ։

Իսկականի վերայ Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով գրած է։

ԱՂԵՔՍԱՆԴՐ.

Ս. Պետերբուրգ.
18 Յունիսի 1885 թ.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԷՋՄԻԱԾՆԻ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱԿԱՐԱՅ

Ի հաւաստիս Մեր ուշադրութեան առ Հայ եկեղեցին և ի յայտարարութիւն Մեր առ Ձեզ ունեցած անձնական առանձին բարեհաճութեան, ամենաողորմածաբար թուեցինք Ձեզ ի շարս կրողաց Մեր Կայսերական շքանշանին՝ յանուն սուրբ և մեծ Իշխան Աղէքսանդր Նեւսկու, որոյ նշանները ընդ

այսմ առաքելով առ Ձեզ՝ կը մնամք, Մեր Կայսերական ողորմածութեամբ բարեհաճ:

Իսկականի վերայ Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով ստորագրած է՝

Ի Պետերհօֆ. ԱՂԵՔՍԱՆԴՐ.

18 Յուլիսի 1885 ամի.

Ս. Էջմիածնի Սինօդը Վեհափառ Հայրապետի հաստատութեան պաշտօնական թուղթը ստանալով ինչ ինչ անհրաժեշտ կարգադրութիւնները անելուց յետոյ, ինչպէս հաղորդել էինք՝ Ղարաբաղի թեմի կառավարիչ Գեր. Տ. Գրիգոր Սրբազան Արքեպիսկոպոսին և Սինօդի անդամ Գեր. Տ. Յովակիմ Սրբազան եպիսկոպոսին հրաւիրակ կարգեց Նորին Վեհափառութեան՝ որոնք ամսոյս 9-ին անվտանգ ժամանելով Քիշնև, 10-ին ներկայացել են Նորին Վեհափառութեան, մատուցանելու հայրապետական գրօշակիր խաչ և գաւազանը և յայտնելու իրանց հրաւիրակութեան պաշտօնը:

Գերապատիւ հրաւիրակների Նորին Վեհափառութեան ներկայանալու մանրամասնութիւնը պարունակող սոյն գրութիւնը ստանալով Քիշնևից հաղորդումենք ի գիտութիւն ընթերցողաց:

«Ամսոյս 9 ին երեկոյեան ժամը 6 ին ողջամբ ժամանեցին Քիշնև Սինօդի Սրբոյ Էջմիածնի և Մայր Աթոռոյ միաբանութեան հրաւիրակներ Գերապատիւ Տեարք Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեանց՝ կառավարիչ թեմին Հայոց Ղարաբաղու և Յովակիմ Եպիսկոպոս՝ անդամ Սինօդին Սրբոյ Էջմիածնի: Սրբազան Հրաւիրակներին դիմաւորեցին Քիշնևի կայարանը տեղական հոգևորականաց դասը և խուռն բազմութիւն հայազգի ժողովրդոց քաղաքիս երկուց սեռից: Կայարանէն Սրբազանները նստելով յառաջուց պատրաստուած կառքը դիմեցին ուղղակի էջմիածնական կալուածոց մէջ գտնուած յատուկ նոցա համար կահաւորուած բնակարանը, որը կգտնուի դէմ յանդիման փառաւոր նորաշէն առաջնորդարանի վիճակիս Հայոց Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ, յորում և ունի իւր բնակութիւն Նորին Վեհափառութիւն Սրբազնագոյն Կաթուղիկոսն ամենայն Հայոց:

Հետևեալ օրը ամսոյս 10 ին կանուխ առաւօտեան սկսան հետզհետէ ժողովուել հրաւիրակ Սրբազաններու բնակարանը տեղա-

կան հոգևորականաց դասը կարևոր պատրաստութիւնքը տեսնելու Վեհափառ Հայրապետին ներկայանալու համար, իսկ քաղաքիս ազգայնոց ականաւոր իշխանները ուղղակի ի Վեհարան, ամենքն ալ սրտատրոփ և լցեալ անպատում խնդութեամբ որ արժանի պիտի լինին տեսնելու մի փառաւոր, իսկ հոյակապ հանդէս, որոյ վերայ հասկացողութիւն անգամ չունէին։

Ժամը 11 ին մի քառորդ մնացած Վեհափառ Հայրապետը բարեհաճեցաւ ելնել իւր ներսի սենեակներէն և մտաւ ընդունարանը, ուր անմիջապէս հրաւիրուեցան ազգային իշխանները և մի փոքր միջոց մխիթարուեցան Նորին Սրբութեան պատկառելի և քաղցրաժպիտ տեսութեամբ և խօսակցութեամբ։ Յետոյ Նորին Վեհափառութիւնն բարեհաճեցաւ յայտնել Հրաւիրակ Սրբազաններուն տեղական աւագ երէց քահանայի միջոցաւ թէ ինքը պատրաստ է ընդունել զնոսա։

Ճիշդ ժամը 11 ին Հրաւիրակ Սրբազանները փիլոններով եւ առաջներից երկու կաթուղիկոսական շաթիրներ իւրեանց պատմական ծիրանեգոյն համազգեստներով ձեռքերնին բռնած Պարսկական շահերից ընծայուած տաճէք, յետոյ երկու կարգ շարուած դպրաց դասը ուրարները ուսերնին ձգած, չորս քահանայք փիլոններ առած, յորոց միոյն ձեռք կաթուղիկոսական խաչ և միւսին հովուապետական գաւազան, որք յատկապէս բերուած էին Մայր Աթոռէն; յետոյ էջմիածնական կալուածոց կառավարիչ բարեշնորհ Կարապետ վարդապետ յամրընթաց քայլերով դիմեցին ուղղակի Վեհարան որոյ դռները բաց էին ընդունելու այդ շքեղ գնացքը։ Երբ որ հասան ընդունարան, ուր էր Վեհափառ Հայրապետն իւր շուրջը ունելով յոտնկայս ազգային իշխանները, ամենքը գլուխները խոնարհելով ողջունեցին և կանգնեցին Վեհափառ Հայրապետի առջև, որ նոյնպէս ոտքի վերայ կանգնած կայր, և իւրաքանչիւր ոք կալաւ իւրեան յարմարաւոր տեղը յաջմէ ունելով գաւազանը և յահեկէ կաթուղիկոսական խաչը հովուապետական դրօշներով։

Ալեզարդ Գրիգոր Սրբազան վերցուց վեղարը և գլխաբաց ասաց հետևեալ խօսքերն ի դէմս Նորին Վեհափառութեան յուզուած սրտիւ և դողդոջուն ձայնիւ։

ՎՍԵՀԱՓԱՌ ՏԷՐ

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ

«Ես և իմ միաբանակից եղբայր Գեր. Յովակիմ եպիսկոպոս
«եկած ենք ի դիմաց Սինոդի Սրբոյ Էջմիածնի և Միաբանութեան
«Մայր Աթոռոյ հրաւիրել զՁերդ Վեհափառութիւն գալ բազմել
«ի Գահ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչի, յապացոյց որոյ
«ահա կմատուցանենք Ձեր Վեհափառութեան այս սուրբ խաչն
«կաթուղիկոսական և այս հովուապետական գաւազան»:

Ասելով այս խօսքեր առաւ Սրբազանը Հայրապետական գաւազանը. և քայլելով դէպի Վեհափառ Հայրապետն մատոյց զայն Նորին Սրբութեան խորին յարգանօք և համբուրիւ սրբոյ Աջոյն, և ապա դառնալով իւր նախկին տեղը՝ շարունակեց ասել:

«Վեհափառ Տէր, վերջին ժամանակներս մեր սիրելի ազգայնոց
«մեծագոյն մասը կարծում էր թէ՝ երկինքը միշտ մռայլ և մա-
«ռախլապատ պիտի մնայ մեր ազգին առաջ, կարծում էր թէ՝
«իւր ուղը չպիտի փարատի երբէք և կուլար անմխիթար, բայց
«որովհետև սիրտ թագաւորի ի ձեռին Աստուծոյ է, այսպէս
«և ահա Ամենողորմած կամօք Նորին Կայսերական Մեծութեան
«Օգոստափառ Թագաւոր Կայսերն մերոյ փարատեցաւ այժմ այդ
«սուգ, պարզեցաւ երկինք և սփռեցաւ մեր Ազգի վերայ լոյս և
«ցնծութիւն: Այժմ Դուք էք, Վեհափառ Տէր, մեր ազգի լու-
«սատու աստղը, Դուք էք մեր սրտերի միակ յոյսը և ապաւէնը
«և մենք ամենքեանքս հարուստ յուսով կամք մնամք թէ՝ Ձեր
«հայրապետութիւն պիտի լինի օգտակար և փառաւոր մեր ազգի
«համար և մեք միաբանական եղբարքս հանդերձ պիտի մխիթա-
«րուիմք Ձեր Հայրական գութը և խնամքը վայելելով: Կմնայ մեզ
«ուրեմն ջերմագին աղօթքներ վերառաքել առ Բարձրեալն Աս-
«տուած, որպէս զի պարգևէ Ձեր Վեհափառութեան ոյժ, կարո-
«ղութիւն և առողջութիւն և շնորհէ մեզ Ձեր թանկագին կեան-
«քը ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ:»

Նորին Սրբազնութեան այս խորհրդաւոր և գեղեցիկ խօսքեր այնպիսի քաղցր տպաւորութիւն գործեցին ունկնդրաց վերայ, այնպիսի մի անօրինակ վեհութիւն տուին այդ հրաւիրանաց հանդիսին, մանաւանդ այն նշանաւոր վայրկենին, երբ մատոյց Նորին Վեհափառութեան Հովուապետական գաւազան, որ շատերի աչ-

քերէն սկսած հասել յորդառատ արտասուք ուրախութեան և ոգևորութեան։ Այլապէս կարող չէր լինել. Հայ սիրտը չէր կըրնար անտարբեր աչօք նայիլ այդ չքնաղ և սքանչելի հանդիսին վերայ առանց պահ մը սրտով և հոգւով չյափշտակուելու անցեալ ժամանակների փառաւոր և քաղցր յիշատակներով։

Նորին Վեհափառութիւնն անտարբեր չմնաց, Նորա վերայ ևս մեծ տպաւորութիւն գործեց այս հանդէս և հրաւիրակ Գրիգոր Սրբազանի գեղեցիկ խօսքեր. իսկ երբ ստացաւ նորա ձեռքէն Հովուապետական գաւազանը նշմարելի էր թէ՝ որքան յուզեալ էր այն պահուն Նորին Սրբութեան փափուկ սիրտ և հոգին. և ի՜նչ փառաւոր, ի՜նչ վսեմ, վեհ և պատկառելի էր այդ վայրկենին Նորին Վեհափառութեան կերպարանք։

Երբ վերջացուց Գրիգոր Սրբազան իւր ատենաբանութիւն, Սրբբազնագոյն Կաթուղիկոսն յանկարծ Հովուապետական գաւազանը ձեռքին ի դէմս հրաւիրակ Սրբազաններին պատասխանեց այսպէս.

«Ձեր պատուաւոր հրաւիրակութիւնն՝ արդէն կյիշեցունէ «ինձ այն ծանր ծանր հայրապետական պարտաւորութիւններն, «զորս Երկինք դրին ինձ վերայ. ես ի նկատի ունելով իմ ծերու«թեան հասակը և իմ անձնական տկարութիւնս, չեմ վստահանար «խոստանալ թէ կարեմ լիովին լցուցանել Սուրբ Եկեղեցւոյ և սի«րելի Ազգիս բազմակողմանի պահանջքն և պիտոյք. բայց եթէ «այն Տիրական ձայնին որ երբեմն կքաջալերէր զՍրբազան Առա«ռաքեալն Պօղոս, կխրախուսէ և զիս յասելն «Շատ են քեզ «շնորհք իմ, զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի» այն ժա«մանակ յուսամ թէ Աստուածային օժանդակութեամբ կարեմ «մասնաւորապէս արդարացուցանել ազգի և եկեղեցւոյ յոյսը և «ակնկալութիւնքը. ուրեմն կխնդրեմ աղօթեցէք առ Աստուած «զօրացուցանել իմ հոգեկան և մարմնական կարողութիւնքս «որպէս զի մշակ առանց ամօթոյ լինիմ առաջի Աստուծոյ, առաջի «Ազգիս Հայոց և առաջի Առաքելական սուրբ եկեղեցւոյ Նորին»։

Յետոյ Սինոդի Անդամ Սրբազան Յովակիմ եպիսկոպոս մատոյց Նորին Վեհափառութեան Ս. Սինոդի պաշտօնական Թուղթը՝ զոր հրամանաւ Վեհափառին վիճակային Կոնսիստորի Ատենադպիրը բարձրաձայն կարդաց ի լուր ամենեցուն և որ ունէր զայս օրինակ։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդէ Սրբոյ Էջմիածնի

Յայտարարութիւն.

Սինոդս նշանակեալ զԿառավարիչ Թեմին Հայոց Ղարաբաղու զԲարձր Սրբազան Գրիգոր Արքեպիսկոպոսն Սագինեանց և զԱնդամ Սինոդիս զՍրբազան Յովակիմ Եպիսկոպոսն Տէր Գրիգորեանց ի պաշտօն Հրաւիրակութեան ի դիմաց Անդամոց Սինոդիս և Միաբանութեան Մայր Աթոռոյս ուղևորեաց յառս Ձերդ Վեհափառութեան առ ի հրաւիրել զՁերդ Սրբութիւն յԱթոռ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի։

Իսկ մեք և համայն Ուխտ Միաբանութեանս աղաչեմք զԱմենաբարին Աստուած, զի յաջողեսցէ Ձեզ անփորձ և անվտանգ հասանել ի Մայր Աթոռս ի Ս. Էջմիածին։

Տեղակալ Ատենապետի Սինոդի — ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Անդամք:
ՄԵՍՐՈՎՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՍԱՄԲՐԷ ՎԱՐԴԱՊԵՏ

Համար 2596
Ի 28 Օգոստոսի 1885 ամի
Ի Ս. Էջմիածին։
Ատենադպիր Ս. Մուշեղեանց։

Այնուհետև հոգևորական դասը խոնարհելով առաջի Նորին Վեհափառութեան և համբուրելով Նորա Սուրբ Աջը դուրս եկան ընդունարանէն, ուր մնացին ըստ հրամանի Վեհափառին միայն հրաւիրակ Սրբազանները, որք իշխանների հետ ծանօթացան և ապա ամենեքեան հրաժեշտ տուին և գնացին իւրեանց տներ։

Այսպէս վերջացաւ այս գեղեցիկ հանդէս հրաւիրանաց որ մի տարօրինակ մխիթարական տպաւորութիւն գործեց ամենքի վերայ և իւրաքանչիւր ոք զմայլած, հիացած և ոգևորուած բերնէ բերան սկսան պատմել իրարու իւրեանց տեսածը և լսածը և հանդիսի փառաւորութիւն և շքեղութիւն։

* * *

Սրբազան Հրաւիրակները հեռագրով յանուն Սինոդի յայտնում են որ Նորին Վեհափառութիւնը Հոկտեմբերի 3-ին դուրս կգայ Քիշնևից և 5-ին Օդեսայից նաւ նստելով Բաթումի վերայով կըժամանէ Թիֆլիզ և այնտեղից Ս. Էջմիածին։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.